ԶԵԿՈՒՅՑ
2020-2025

ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՉԵՐԻ ԱՐԳԵԼՔԻ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Բռնության հրապարակային կոչերի արգելքի իրավակիրառ պրակտիկան Հայաստանում» 2020-2025 թթ. զեկույցը պատրաստվել է «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից:

Օգոստոս, 2025 թ.

Այս զեկույցը պատրաստվել է Նորվեգիայի ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում բացառապես «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն և այն պարտադիր չէ, որ արտացոլի Նորվեգիայի կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 2

Հետազոտության առարկան և մեթոդաբանությունը 4

Արտահայտման ազատության սահմանները 6

Սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը՝ որպես պաշտպանված հատկանիշներ ... 12

ՀՀ օրենսդրությունը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը 14

Իրավակիրառ պրակտիկան և արձանագրված խնդիրները 17

Պետական մարմինների կողմից դեպքերի արձանագրումը 17

Դիտարկումներ դատական պրակտիկայի վերաբերյալ 31

ԼԳԲՏ+ անձանց թիրախավորող ատելության խոսքը 34

ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ատելության խոսքի իրավիճակի ամփոփում 41

Եզրակացություն 43

Առաջարկներ 44

Հավելված 1. Ուսումնասիրված դատական գործերի համարները 45

Հավելված 2. Քննչական կոմիտեի պաշտպանակ պատասխանը 2003 թ.-ի ՀՀ Քրեական օրենսգրքի 226.2 և 2021 թ.-ի օրենսգրքի 330 հոդվածների կիրառության վերաբերյալ 46

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում փոքրամասնությունների, հատկապես՝ ԼԳԲՏ+ անձանց պաշտպանությունը երկար տարիներ անտեսվել է՝ այն հիմնավորմամբ, որ նման խնդիր գոյություն չունի: Այնուամենայնիվ, վերջին տարիներին հնարավոր եղավ պետական մարմինների ուշադրությունը գրավել այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են՝ ատելության խոսքը, խտրականությունը, դրանց հիմքով հանցագործությունները: «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը տարիներ շարունակ արձանագրել է ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ատելությամբ և անհանդուրժողականությամբ պայմանավորված իրավախախտումները, որոնք հիմք են ծառայել պնդելու, որ Հայաստանի Հանրապետությունը կարիք ունի համալրելու օրենսդրությունը այնպիսի իրավակարգավորումներով, ինչպիսիք են խտրականության արգելքի մասին համապարփակ օրենքը և ատելության խոսքի տարբեր տեսակները արգելող դրույթները: «Փինք»-ի կողմից յուրաքանչյուր տարի գրանցվում է սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության պատճառով մարդու իրավունքների խախտումների՝ արդեն վեց տասնյակը գերազանցող դեպքեր: Այս դեպքերի մեծամասնություն են կազմում ընտանեկան բռնության դեպքերը, որոնք ինքնին, հանդիսանալով տարբեր տեսակի բռնության դրսևորումներ, հանդիսանում են հանցագործություն: Մնացած դեպքերի մեծ մասը ևս հանդիսանում են քրեական օրենսգրքով արգելված արարքներ՝ կատարված ատելության և թշնամանքի շարժառիթով, ինչը ևս ծանրացնում է հանցանքի բնույթը: Այս իրավիճակը և արձանագրվող դեպքերի աճող ցուցանիշը վկայում են երկրում զուգահեռաբար ատելության և անպատժելիության մթնոլորտների մասին: Այսինքն, մի կողմից պետական մարմինների կողմից որևէ ջանք չի գործադրվում բարձրացնելու համար հասարակության իրազեկվածության մակարդակն ու հանդուրժողականությունը ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ, մյուս կողմից չի ապահովվում իրավական արդյունավետ պաշտպանության որևէ միջոց՝ վերականգնելու համար մարդկանց խախտված իրավունքները և կանխելու համար հետագա ոտնահարումները:

Այսպես 2018 թվականի իշխանափոխությունից հետո ատելության խոսքի դեմ պայքարը բերվեց օրակարգ: Դեռևս 2019 թվականի ընթացքում Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ մշակվել էր նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թթ. գործողությունների պլանը, որտեղ տեղ էր գտել ատելության խոսքի արգելքի օրենսդրական կարգավորումների անհրաժեշտությունը՝ միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա: Ձևավորվեց աշխատանքային խումբ, որը ներառում էր Ազգային ժողովի պատգամավորների և խտրականության դեմ պայքարի ոլորտում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչ փորձագետների՝ քննարկելու և կազմակերպելու համար ատելության խոսքի իրավակարգավորումներին ուղղված աշխատանքները: Գործելով մեկ տարի, խմբի աշխատանքներն ավարտվեցին՝ չտալով որևէ արդյունք: Միևնույն ժամանակ, Կառավարության կողմից առաջարկվեց քրեականացնել բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաև այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը[1], իսկ ատելության խոսքի մյուս դրսևորումների կարգավորումը թողնել հետագա քննարկումներին: Այսպիսով, մինչ օրս ատելության խոսքի կարգավորումների առնչությամբ որևէ գործնական քայլ չի կատարվել: 2021 թ.-ի քրեական նոր օրենսգրքի ընդունումից հետո նույն արարքը նախատեսվեց 330-րդ հոդվածով:[2]

1 Տես ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին». https://www.arlis.am/hy/acts/141919
2 ՀՀ Քրեական օրենսգիրք 2021 թ. https://www.arlis.am/hy/acts/153080

Այնուամենայնիվ, մինչ օրս «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից արձանագրված անձանց սեռական կողմնորոշմամբ և/կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված բռնության կոչերի դեպքերը այդպես էլ պատշաճ արձագանքի չեն արժանացել իրավապահ մարմինների կողմից. Որևէ գործ չի հարուցվել այս առնչությամբ ներկայացված հաղորդումների հիման վրա: Այս հինգ տարիների ընթացքում արձանագրված դեպքերի ընդհանուր նկարագիրը ամփոփված է այս զեկույցում:

Հարկ է նկատել, սակայն, որ այս դրույթը պարբերաբար կիրառվել է քաղաքական ենթատեքստ պարունակող դեպքերում և ըստ էության կարելի է պնդել, որ գործնականում դրույթի կիրառման կամքի խնդիր առկա չէ: Դրա կիրառման հետ կապված խնդիրները, սակայն ենթակա են մանրակրկիտ ուսումնասիրության:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2018 թ.-ին «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից հրապարակվեց զեկույց, որում ամփոփված էին Հայաստանի Հանրապետության՝ Եվրոպայի խորհրդի անդամակցությունից ի վեր արձանագրված պաշտոնատար անձանց կողմից ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ատելության խոսքի դրսևորումները: Հետազոտությունը, այսինքն, ընդգրկում էր 2004-2018 թթ. ընկած ժամանակահատվածը: Այն ցույց էր տալիս, որ պետական պաշտոնյաների կողմից ատելության խոսքը ոչ միայն հետևողականորեն արտահայտվել է, այլև տարիների ընթացքում դարձել է ավելի լայն տարածում ունեցող և համատարած բնույթ է ձեռք բերել: Պետական պաշտոնյաներն իրենք են տարածել ատելության և խտրականության հռետորաբանություն՝ առանց որևէ հետևանքի իրենց պաշտոնների համար: Ուսումնասիրված ատելության խոսքի դեպքերից որևէ մեկը իրավապահ մարմինների կողմից քննության առարկա չի դարձել կամ հասցեագրվել որևէ ձևով: Արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչները շարունակել են մնալ ՀՀ Ազգային ժողովում՝ նույն անձնակազմով: Նրանց դերակատարությունը պետական կառավարման համակարգում «կանաչ լույս» է եղել ատելության հիմքով հանցագործություններին և խտրականությանը՝ ձևավորելով անպատժելիության մթնոլորտ:

Սույն ուսումնասիրության նպատակն է վեր հանել 2018 թ.-ի իշխանափոխությունից հետո ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ատելության խոսքի իրավիճակը: Զեկույցը, մասնավորապես, պատասխանում է հետևյալ հարցերին՝

- Արդյոք պաշտոնատար անձինք շարունակու՞մ են տարածել ատելություն և անհանդուրժողականություն ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ, եթե ոչ, ապա՝ ինչպիսին է պաշտոնատար անձանց արձագանքը ԼԳԲՏ+ անձնանց նկատմամբ բռնության դեպքերին և անհանդուրժողականություն սերմանող խոսքին,

- Արդյոք 2020 թ.-ից ուժի մեջ մտած՝ հրապարակային բռնության կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելի քրեաիրավական կարգավորումը արդյունավետ կիրառվու՞մ է ԼԳԲՏ+ անձնաց նկատմամբ տարածվող բռնության կոչերի և բռնության արդարացման, բռնության քարոզի պարագայում,

- Ինչպիսի՞ն է եղել նշյալ քրեաիրավական կարգավորման կիրառությունը վերջին հինգ տարիների ընթացքում. արդյոք կարելի է այն համարել արդյունավետ իրավական պաշտպանություն նախատեսով դրույթ:

Այս հարցերի ապատասխանները ստանալու համար ուսումնասիրության են ենթարկվել՝

- «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից 2020-2025 թթ.-ի ընթացքում արձանագրված տվյալները ատելության խոսքի իրավիճակի շուրջ, որոնք հիմնված են զանգվածային լրատվամիջոցներում և սոցիալական ցանցերում իրականացված մշտադիտարկման վրա,

- Դատական գործերի «Դատալեքս» առցանց հարթակում առկա դատավճիռները այն գործերով, որոնցով մեղադրանք է առաջադրված եղել նախկին քրեական օրենսգրքի 226.2 հոդվածով կամ նոր քրեական օրենսգրքի նույն հանցակազմը նախատեսող 330-րդ հոդվածի խախտման հիմքով. ուսումնասիրվել է 23 դատական գործ:

- Հարցում է ուղարկվել ՀՀ Քննչական կոմիտե՝ ձեռք բերելու համար տվյալներ առ այն, թե՝
    - Քանի՞ հաղորդում է ներկայացվել նշյալ հանցակազմի հատկանիշներով,
    - Ներկայացված հաղորդումներից քանիսո՞վ են քրեական վարույթներ հարուցվել,
    - Եթե հարուցվել են քրեական վարույթներ, ապա՝ դրանցից քանիսը որ սոցիալական խմբի կամ որ հատկանիշի դեմ են ուղղված եղել:
    - Հարուցված քրեական վարույթներից քանի՞սն են մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան,
    - Տվյալ հոդվածով սահմանված պատժաչափերից ո՞րն է ընտրվել՝ ըստ խստության:
    - Արդյոք հարուցվել են վարույթներ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով բռնության հրապարակային կոչերի, դրանց քարոզի կամ դրանց արդարացման պարագայում:

Այս հարցերի վերաբերյալ վերլուծությանը նախորդում է հակիրճ իրավական մեկնաբանություն՝ որի շնորհիվ հնարավոր է ընդհանուր պատկերացում կազմել մի կողմից իրավակարգավորման շրջանակի վերաբերյալ, մյուս կողմից դրա՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանության վերաբերյալ:

Զեկույցն ամփոփվում է իրավակարգավորման արդյունավետության վերաբերյալ գնահատականով և պետական մարմիններին ուղղված առաջարկներով:

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Արտահայտման ազատությունը մարդու հիմնարար իրավունք է և հռչակվել է մարդու իրավունքների հիմնարար միջազգային փաստաթղթերում, ինչպիսիք են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Ռասայական խտրականությունից պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան, Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիան և այլն: Արտահայտման ազատությունը, միևնույն ժամանակ, չի հանդիսանում բացարձակ իրավունք և որոշակի պայմանների առկայության պարագայում կարող է ենթարկվել սահմանափակումների: Խուսափելու համար այդ սահմանափակումների չարաշահումից և ապահովելու համար արտահայտման ազատության պաշտպանության ու ոչ իրավաչափ խոսքից այլոց իրավունքների պաշտպանության նուրբ սահմանները՝ միջազգային և տարաշրջանային փաստաթղթերն ու դրանց հիման վրա գործող դատական և արտադատական մարմինները ձևավորել են սահմանափակումների գնահատման կարգ: Սակայն այս սահմանափակումները ևս թե անցյալում, թե ներկայում տեղիք են տվել տարատեսակ իրավական և քաղաքական վեճերի:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 7-րդ հոդվածը, որը ձևավորվել է երկարատև քննարկումների արդյունքում, չի արգելում խոսքը անմիջականորեն, այլ ուղղված է խտրականություն հրահրելու դեմ պաշտպանությանը:[3] Սա ենթադրում էր հավասարության խթանում՝ պատժիչ միջոցների փոխարեն, ինչպես օրինակ՝ կրթության և իրազեկման արշավների միջոցով:

ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ)[4] 19-րդ հոդվածի 2-րդ մասը երաշխավորում է արտահայտվելու ազատության իրավունքը, սակայն 19-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է թույլատրելի սահմանափակումներ՝ այլոց իրավունքների, ազգային անվտանգության, հանրային առողջության կամ հասարակական կարգի պաշտպանության համար: ՔՔԻՄԴ 20-րդ հոդվածի 2-րդ մասը պահանջում է օրենքով արգելել ցանկացած ազգային, ռասայական կամ կրոնական ատելություն հրահրող խոսք, որն ուղղված է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրմանը:

ՄԱԿ-ի Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (ՌԽՎԿ)[5] 4-րդ հոդվածը պարտադրում է մասնակից պետություններին դատապարտել այնպիսի քարոզչությունը և այնպիսի կազմակերպությունների գործունեությունը, որոնք հիմնված են ռասայի, գույնի կամ էթնիկական ծագմամբ մարդկանց որևէ խմբի գերակայության գաղափարների կամ տեսությունների վրա, կամ որոնք փորձում են արդարացնել կամ խթանել ռասայական ատելություն և խտրականություն: Պետությունները պարտավորվում են անհապաղ և դրական միջոցներ ձեռնարկել նման խտրականության ցանկացած հրահրում կամ գործողություն վերացնելու համար՝ համաձայն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված սկզբունքների:

3 ՄԱԿ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948 թ. https://www.arlis.am/hy/acts/1896
4 ՄԱԿ, Միջազգային դաշնագիր քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին, 1966 թ. https://www.arlis.am/hy/acts/18500
5 ՄԱԿ, Ռասսայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, 1965 թ. https://www.arlis.am/hy/acts/3293

ՌԽՎԿ-ն, մասնավորապես, սահմանում է ատելության խոսքը որպես «ուրիշներին ուղղված խոսքի ձև, որը մերժում է մարդու արժանապատվության և հավասարության հիմնարար սկզբունքները և նպատակ ունի ստորացնել անհատների և խմբերի հեղինակությունը հասարակության աչքում»:[6]

Միջազգային փաստաթղթերի մեկնաբանությունների հիման վրա տարբերակվում են ատելության խոսքի տարբեր տեսակներ՝ ըստ դրա պատճառած կամ ակնկալվող վնասի բնույթի: Վնասը կարող է պատճառվել ատելության խոսքի արդյունքում հետևող գործողությունների ձևով, որոնք հանգեցնում են բռնության կամ խտրականության, կամ կարող է պարունակվել հենց խոսքում՝ առաջացնելով նվաստացում կամ հոգեբանական վնաս:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի[7] 10-րդ հոդվածը նախատեսում է յուրաքանչյուր անձի ազատորեն արտահայտվելու իրավունքը: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է՝ ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Իր դատական պրակտիկայում Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը նույնիսկ հստակ նշել է, որ խոսքի հեղինակի դիտավորությունը և անհապաղ վնասի հավանականությունը (որոնք ՄԱԿ-ի «անհրաժեշտության» մոտեցման առանցքային տարրերն են) պարտադիր չեն ատելության խոսքի դատապարտման համար: Այսինքն, ատելության խոսքի համար պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև բռնության կամ խտրականության տեսքով որևէ հետևանքի բացակայության պարագայում անգամ:

Դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ արտահայտման ազատությունը կարելի է սահմանափակել միայն միաժամանակ հետևյալ պայմանների դեպքում.

- Սահմանափակումը պետք է նախատեսված լինի օրենքով և լինի անհրաժեշտ:
- Ուղղված լինի այլ անձանց իրավունքների և հեղինակության պաշտպանությանը, ինչպես նաև ազգային անվտանգության, հասարակական կարգի, հանրային առողջության կամ բարոյականության պահպանմանը:
- Պետք է համարվի անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում այս նպատակների պաշտպանության համար:

Պետք է ընդգծել, որ այս պայմաններից միայն մեկի կամ երկուսի բավարարումը բավարար չէ սահմանափակումը օրինական համարելու համար: Սահմանափակումը համարվում է իրավաչափ միայն այն դեպքում, երբ բոլոր այս պահանջներն ամբողջությամբ պահպանված են:

Այս առումով արտահայտման ազատության սահմանափակումը պետք է բավարարի հետևյալ չափանիշներին.

6 ՄԱԿ, Ռասայական խտրականության վերացման կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն No. 35 Ռասսայական ատելության խոսքի դեմ պայքարի մասին, 26 սեպտեմբերի, 2013 թ., CERD/C/GC/35, պարագրաֆ 10
7 Եվրոպայի խորհուրդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա. https://www.arlis.am/hy/acts/20870

- **Նախատեսված լինի օրենքով**, այսինքն՝ ազգային իրավակարգավորումը պետք է հստակ սահմանի, թե ինչ իրավիճակներ կամ խոսքի բովանդակություն չի պաշտպանվում արտահայտման ազատության իրավունքով:

- **Ունենա օրինական նպատակ**, այսինքն՝ սահմանափակումը պետք է ծառայի վերոհիշյալ նպատակներից որևէ մեկի իրական պաշտպանությանը, մասնավորապես՝ այլոց իրավունքների և հեղինակության, ազգային անվտանգության, հասարակական կարգի, հանրային առողջության կամ բարոյականության պահպանությանը:

- **Լինի անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում**, այսինքն՝ այս պահանջը ենթադրում է կոնկրետ դեպքի վերլուծություն՝ գնահատելու համար սահմանափակման համաչափությունն ու անհրաժեշտությունը:

Դաշնագրի 20-րդ հոդվածի 2-րդ կետում նշվում է.

«Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որը հրահրում է խտրականություն, թշնամանք կամ բռնություն, պետք է արգելվի օրենքով»:

Կարևոր է նշել, որ 19-րդ և 20-րդ հոդվածները փոխկապակցված են: Արտահայտման ազատությունը չի կարելի մեկնաբանել այնպես, որ այն թույլ տա ազգային, ռասայական կամ կրոնական ատելության քարոզ, որը հանգեցնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրմանը: Մարդու իրավունքների կոմիտեն հաստատում է, որ 20-րդ հոդվածի հիմքով արտահայտման ազատության ցանկացած սահմանափակում պետք է համապատասխանի նաև 19-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված պահանջներին:[8]

Պետությունները պարտավոր են տարբեր ձևերով արձագանքել ատելության խոսքին՝ կախված դրա լրջության աստիճանից: Մասնավորապես, ՔՔԻՄԴ-ի 20(2) հոդվածով պահանջվում է քրեական, քաղաքացիական կամ վարչական օրենսդրությամբ արգելել այն: Եթե խոսքը պարունակում է թշնամանքի, խտրականության կամ բռնության ուղղակի հրահրում որոշ խմբերի դեմ, ապա դա կարող է առաջացնել քրեական պատասխանատվություն: Երկրորդ խումբ դեպքերում, ատելության խոսքը կարող է արգելվել ՔՔԻՄԴ-ի 19(3) հոդվածի համաձայն, եթե այն համապատասխանում է արտահայտման ազատության սահմանափակման թույլատրելիության թեստին: Այս դեպքում, եթե զոհը ճանաչելի անհատ է, խոսքը կարող է դիտվել որպես հետապնդում, նույնիսկ եթե այն չի պարունակում բռնության, խտրականության կամ թշնամանքի հրահրում: Երրորդ խումբ դեպքերում, ատելության խոսքը, որը խթանում է անհանդուրժողականությունը, բայց բավարար չափով լուրջ չէ, կարող է պաշտպանվել արտահայտման ազատության շրջանակում:[9]

Ատելության խոսքը կարող է արտահայտվել տարբեր ձևերով և տարբեր ազդեցություն ունենալ զոհի վրա: Դա կարող է հանգեցնել բռնության, թշնամանքի կամ խտրականության գործողությունների՝ զոհի պաշտպանված հատկանիշների հիմքով, ինչպիսիք են ռասան, մարշկի գույնը, էթնիկ ծագումը, կրոնը, սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունը, սեռը, առողջական կարգավիճակը և այլն: Որոշ դեպքերում այն կարող է դիտարկվել որպես մարդու բարոյական ամբողջականության խախտում և անձի անձնական կյանքի իրավունքի խաթարում: Ատելության խոսքը չի սահմանափակվում միայն ատելության, նվաստացման կամ վարկաբեկման բացահայտ քարոզչությամբ կամ հրահրմամբ, այլ ներառում է նաև ցանկացած հետապնդում, վիրավորանք, բացասական կարծրատիպերի տարածում, պիտակավորում կամ սպառնալիք այդ անձանց կամ խմբերի նկատմամբ, ինչպես նաև այդպիսի

8 Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 34-րդ հանձնարարական, 2011 թ.
9 Հոդված 19-ի կողմից առաջարկված մոտեցում՝ հիմնված կարծիքի և արտահայտման ազատության պաշտպանության և խթանման հարցերով ՄԱԿ հատուկ զեկուցողի կողմից ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային ներկայացված տարեկան զեկույցի վրա, 7 սեպտեմբերի, 2012 թ., A/76/357

արտահայտությունների ցանկացած արդարացում՝ հիմնված անձնական հատկանիշների կամ կարգավիճակի ոչ սպառիչ ցանկի վրա:

Եվրոպայի Խորհրդի Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնախմբի (ՌԱԵՀ) համաձայն, ատելության խոսքի կիրառումը կարող է առաջացնել վախ, անապահովություն, ինչպես նաև՝ անհիմն մեղքի, ամոթի և նվաստացման զգացում նրանց մոտ, ովքեր դրան ենթարկվում են, ինչը կարող է խիստ բացասական հետևանքներ ունենալ նրանց ինքնավստահության և ինքնագնահատականի վրա: Այդ զգացումները կարող են անդրադառնալ անձի կյանքի բոլոր ոլորտների վրա՝ աշխատանքում, դպրոցում կամ տանը, սակայն հատկապես լուրջ ազդեցություն ունենալ ընտանեկան հարաբերությունների և հասարակական կյանքին մասնակցելու պատրաստակամության վրա:[10] Ատելության խոսք կարող է համարվել ոչ միայն անհատի կամ մի խումբ անձանց ստորացման, ատելության կամ դավադրության ջատագովություն, խթանում կամ հրահրում, այլ նաև ցանկացած ոտնձգություն, վիրավորանք, բացասական կարծրատիպացում, ստիգմատիզացիա, կամ վերաբերմունք անհատի կամ մի խումբ անձանց նկատմամբ և այս բոլոր արտահայտման ձևերի ցանկացած արդարացում՝ հիմնված պաշտպանված հատկանիշների ոչ սպառիչ ցանկի կամ կարգավիճակի վրա:[11]

Քեմդենի սկզբունքները, հղում անելով ՔՔՄԴ-ի 20(2) հոդվածին, տրամադրում են «ատելություն», «թշնամանք», «հանրային քարոզչություն», «հրահրում» և «դրական միջոցառումներ» հասկացությունների սահմանումներ:[12] Այսպես,

ա) **«ատելություն»** և **«թշնամանք»** հասկացությունները վերաբերում են վիրավորական ինտենսիվ և իռացիոնալ էմոցիաներին, թիրախ խմբի նկատմամբ թշնամությանն ու ատելությանը.

բ) **«ջատագովություն»** տերմինը, այս դեպքում, հասկացվում է որպես թիրախ խմբի նկատմամբ հանրային կերպով ատելություն սերմանելու դիտավորության պահանջ.

գ) **«հրահրում»** տերմինը վերաբերում է ազգային, ռասսայական կամ կրոնական խմբերի մասին դիրքորոշումներին, որոնք ստեղծում են խտրականության, թշնամանքի կամ բռնության անմիջական վտանգ այն մարդկանց նկատմամբ, ովքեր պատկանում են այդ թիրախ խմբին:

դ) Տարբեր համայնքների կողմից խմբի ինքնության դրական ընկալմանն ուղղված խոսքի տարածումը ատելության խոսք չի համարվում:

Ռաբաթի գործողությունների պլանը[13] առաջարկել է վեց կետից բաղկացած շեմի փորձարկում՝ որոշելու համար՝ արդյոք ատելության արտահայտությունը պետք է հանգեցնի քրեական պատասխանատվության՝ հաշվի առնելով դրա համատեքստը, խոսքի հեղինակի ինքնությունը, հեղինակի դիտավորությունը, արտահայտության բովանդակությունն ու ձևը, դրա տարածման ծավալը և այն միջոցները, որոնցով այն հասել է լսարանին, ինչպես նաև ապօրինի գործողություններ հրահրելու հավանականությունը: Այսպես՝

ա) **Կոնտեքստը**. Պետք է վերլուծել այն քաղաքական և սոցիալական միջավայրը, որտեղ հնչել է արտահայտությունը՝ հասկանալու խոսքի նպատակն ու ուղղվածությունը,

10 Եվրոպայի խորհուրդ, Ռասիսմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնախումբ, ընդհանուր քաղաքականության հանձնարարական.
https://rm.coe.int/ecri-generalpolicy-recommendation-no-15-on-combating-hate-speech/16808b5b01
11 Տես նախորդ հղումը
12 Քեմդենի սկզբունքներ, 12.1 https://www.article19.org/wp-content/uploads/2009/04/Camden-Principles-ENGLISH-web.pdf
13 Ռաբաթի գործողությունների ծրագիր. https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/SeminarRabat/Rabat_draft_outcome.pdf

հատկապես՝ խոցելի խմբերի դեմ խտրականություն, թշնամանք կամ բռնություն հրահրելու դիտավորությունը և խոսքի ու հնարավոր վնասակար հետևանքների (օրինակ՝ բռնության կամ խտրական գործողությունների) միջև պատճառահետևանքային կապը:

բ) **Խոսնակի դիրքն ու հեղինակությունը.** Կարևոր է հաշվի առնել խոսնակի սոցիալական դիրքը և հեղինակությունը, ինչպես նաև նրա ազդեցությունը հասարակության տարբեր խմբերի վրա:

գ) **Նպատակը**. Եթե խոսքը ատելություն չի տարածվել դիտավորությամբ, ապա դրա արգելումը պարտադիր չէ: Այսինքն՝ անզգույշ կամ անփույթ ձևով հնչեցված ատելության խոսքը կարող է կարգավորվել ՔՔԻՄԴ 19(3)-րդ հոդվածի սահմաններում կամ արժանանալ հանրային քննադատության, բայց պարտադիր չէ քրեականացնել: Նպատակը համարվում է ատելության խոսքի հիմնական տարրերից մեկը՝ ՔՔԻՄԴ 20(2)-րդ հոդվածի կիրառության համար, քանի որ այն վերաբերում է ատելության և խտրականության քարոզին:

դ) **Բովանդակությունն ու ձևը**. Պետք է գնահատել արտահայտության բովանդակությունը և ձևը՝ հասկանալու դրա սադրիչ բնույթը:

ե) **Խոսքի տարածման չափը**. Անհրաժեշտ է հաշվի առնել խոսքի լսարանը, տարածման միջոցները, հասանելիությունը, հրապարակայնությունը, հաճախականությունը և ծավալը: Այս գործոնները կարևոր են հասկանալու խոսքի ազդեցության մասշտաբը:

զ) **Հավաստիությունը և ռիսկայնությունը**. Ատելության խոսքի հետևանքով հնարավոր վնասակար գործողությունները պետք է լինեն իրական և պարունակեն կոնկրետ ռիսկեր խտրականության, թշնամանքի կամ բռնության դրսևորումների համար, որպեսզի հիմնավորեն դրա արգելումը:

Քաղաքական և կրոնական առաջնորդները պետք է ձեռնպահ մնան անհանդուրժողականության կոչերից կամ նման արտահայտություններից, որոնք կարող են հրահրել բռնություն, թշնամանք կամ խտրականություն, սակայն նրանք նաև առանցքային դեր ունեն՝ արագ և հստակ կերպով դատապարտելու անհանդուրժողականությունը, խտրական կարծրատիպերը և ատելության խոսքի դեպքերը: Պետությունները պարտավոր են իրականացնել համալիր միջոցառումներ՝ ուղղված խտրականության և կարծրատիպերի դեմ պայքարին, մշակութային փոխըմբռնման խթանմանը, մարդու իրավունքների կրթության զարգացմանը, արդարադատության և անվտանգության ոլորտի աշխատողների վերապատրաստմանը, հավասարության մարմինների և բողոքների մեխանիզմների ստեղծմանը, ատելության խոսքի վերաբերյալ տվյալների հավաքագրման ապահովմանը, մեդիայի բազմակարծության ու բազմազանության խթանմանը և միջազգային մեխանիզմների ուժեղացմանը:[14]

Պետությունները պարտավոր են ոչ միայն զերծ մնալ իրենց կողմից ատելության խոսքի տարածումից, այլև կանխել դրա տարածումը և պատասխանատվության ենթարկել այն անձանց, ովքեր նման արտահայտություններ են օգտագործում: Նրանք պետք է հարգեն մարդու իրավունքները և կանխեն դրանց խախտումները:

Քաղաքական և կրոնական առաջնորդները պետք է խուսափեն անհանդուրժողականություն քարոզող հայտարարություններից կամ արտահայտություններից, որոնք կարող են հրահրել բռնություն, թշնամանք կամ խտրականություն: Միևնույն ժամանակ նրանք կարևոր դեր ունեն՝ հստակ և արագ արձագանքելով անհանդուրժողականության, կարծրատիպային խտրականության և ատելության խոսքի դրսևորումներին:

14 Տես նախորդ հղումը

Հարկավոր է ուշադրության արժանացնել պետական պաշտոնյաների ազդեցությունը հասարակական վերաբերմունքի ձևավորման վրա՝ հաշվի առնելով նրանց հեղինակությունը և լայն լսարանը: Նրանց արտահայտած ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրող խոսքը շատ ավելի վտանգավոր է, քան նմանատիպ արտահայտությունները հասարակության սահմանափակ ազդեցություն ունեցող անձանց կողմից: Նման ազդեցիկ խոսքը զգալիորեն բարձրացնում է խտրականության և բռնի գործողությունների ռիսկը:

ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ

Միջազգային իրավական փաստաթղթերից պարզ է դառնում, որ ատելության խոսքը հիմնականում ուղղված է անհատների կամ որոշակի խմբերի դեմ՝ նրանց պաշտպանված հատկանիշների հիմքով: «Պաշտպանված հատկանիշներ» ասելով հասկանում ենք այն առանձնահատկությունները, որոնք հանդիսանում են անձի կամ խմբի ինքնության բաղկացուցիչ մաս, օրինակ՝ սեռ, ռասա, էթնիկ ծագում, մաշկի գույն, սեռական կողմնորոշում, գենդերային ինքնություն, կրոն և այլն:[15]

Այս մոտեցումը հիմնված է միջազգային և տարածաշրջանային մարմինների մեկնաբանությունների և հանձնարարականների վրա: Իրավական կարգավորումները և դրանց մեկնաբանությունները ժամանակի ընթացքում ձևավորվել են համապատասխան հասարակական և քաղաքական պահանջներին արձագանքելով: Այդպես, ռասսայական, ազգային և կրոնական խտրականության և ատելության խոսքի արգելքի առաջին միջազգային համաձայնագրերն արտահայտել են այդ ժամանակաշրջանի հրատապ կարիքները:

Այդ սկզբնական փաստաթղթերից ձևավորված մարմինները հետագայում ընդլայնեցին խտրականության հասկացությունը՝ ճանաչելով նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով պայմանավորված խտրականությունը և ատելության խոսքը: Սա ամրապնդեց ատելության խոսքի արգելքը նաև այդ հատկանիշների հիմքով և հստակեցրեց պետությունների պարտականությունները այն կանխելու և դրա դեմ միջոցներ ձեռնարկելու հարցում:

Մարդու իրավունքների կոմիտեն իր մեկնաբանություններում հաստատել է, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ) պաշտպանում է անձանց խտրականությունից՝ ներառյալ սեռական կողմնորոշման հիմքով: «Սեռ» տերմինը Դաշնագրի մեջ մեկնաբանվում է որպես պաշտպանված հատկանիշ, որն ընդգրկում է նաև սեռական կողմնորոշումը:[16]

ՌԱԵՀ-ը նաև ընդգծում է, որ ատելության խոսքը չի սահմանափակվում միայն ռասսայական, էթնիկ կամ կրոնական խմբերի դեմ ուղղված արտահայտություններով, այլ կարող է ուղղվել նաև այլ խոցելի խմբերի դեմ: Այդ պատճառով էլ մարմինը տվել է ռասսայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 4-րդ հոդվածի լայն մեկնաբանություն:[17] ՌԱԵՀ-ի հանձնարարականներում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը հստակ ընդգրկված են պաշտպանված հատկանիշների ցանկում, ինչի հիմքով էլ սահմանվում է ատելության խոսքի արգելքը:

15 «Արդյոք անհրաժեշտ է խտրականության դեմ պայքարի մասին առանձին օրենքի ընդունումը». https://www.moj.am/storage/uploads/k1k_1HRAP.pdf
16 ՄԻԵԴ վճիռ, Թունենն ընդդեմ Ավստրալիայի, հաղորդակցում 488/1992, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/50/D/488/1992 (1994 թ.)
17 Եվրոպայի խորհուրդ, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնախմբի զեկույցը Հայաստանի վերաբերյալ. https://rm.coe.int/fourth-report-onarmenia/16808b5539

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն առաջարկում է, որ անդամ պետությունները ձեռնարկեն համապատասխան միջոցներ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքի դեմ պայքարելու համար, ներառյալ՝ մեդիայում և համացանցում տարածվող ատելության խոսքը, միաժամանակ հարգելով խոսքի ազատությունը:[18] Կոմիտեն նաև կարևորում է հանրային իրազեկվածության բարձրացումը պետական պաշտոնյաների և հանրային հաստատությունների շրջանում՝ կանխելու ատելության խոսքը, հատկապես մեդիայում, որտեղ այն կարող է առավել ինտենսիվ տարածվել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) իր վճիռներում անդրադարձել է պաշտպանված հատկանիշների ցանկի մեկնաբանությանը՝ ընդգծելով, որ խտրականությունը սեռական կողմնորոշման հիմքով նույնքան անընդունելի է, որքան խտրականությունը սեռի, ռասսայի կամ մաշկի գույնի հիմքով:[19]

Յոգյակարտայի սկզբունքները նույնպես ընդգծում են մարդու իրավունքների պաշտպանության ներառական բնույթը՝ որպես պաշտպանված հատկանիշներ ընդգրկելով սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը:[20] Դրանք ամրագրում են, որ անհատները պետք է պաշտպանվեն ցան-կացած բռնությունից կամ խտրականությունից՝ հիմնված իրենց որևէ հատկանիշի վրա, և ներկայացնում են ուղեցույցներ այն մասին, թե ինչպես կարելի է պաշտպանել սեռական փոքրամասնությունների իրավունքները:

18 Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, թիվ CM/Rec(2010)5 հանձնարարական՝ ուղղված անդամ երկրներում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ ձեռնարկվող միջոցառումներին

19 ՄԻԵԴ վճիռ, Վեյդելանդը և այլոք ընդդեմ Շվեդիայի, 1813/07

20 Միջազգային մարդու իրավունքների կիրառությունը սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության նկատմամբ. Յոգյակարտայի սկզբունքներ. մարտ, 2007 թ. http://www.yogyakartaprinciples.org

ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Միջազգային և տարածաշրջանային պայմանագրերը, որոնց կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը, ստեղծել է այն հիմնական չափորոշիչները, որոնց հիման վրա ներպետական օրենսդրությունը պետք է երաշխավորի և ապահովի մարդու իրավունքների պաշտպանությունը:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի՝[21] կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Նույն հոդվածի երրորդ մասով նախատեսվում է կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման հնարավորություն, այն է՝ միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

2020 թ.-ի ապրիլին տեղի ունեցած քրեական օրենսգրքի փոփոխությամբ քրեական պատասխանատվություն նախատեսվեց անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչի, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելու համար: Այսինքն, ՀՀ օրենսդրությամբ քրեական պատասխանատվություն է նախատեսված ատելության խոսքի առավել վտանգավոր դրսևորման, այն է՝ բռնության հրապարակային կոչերի կամ բռնության արդարացման համար:

Հարկ է նշել, որ բռնության հրապարակային կոչերի հանցակազմը ձևական է, այսինքն՝ դրանով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում անկախ հետևանքներից: Ինչպես նախորդ բաժնում նկարագրված է, ատելության խոսքի պարագայում էական չէ, թե հենց այդ խոսքը դարձել է բռնության պատճառ, թե ոչ: Ինքնին թշնամական, վիրավորական արտահայտությունները, խտրականության կամ բռնության կոչերը համարվում են միջամտություն անձի մասնավոր կյանքի իրավունքի նկատմամբ՝ առաջին հերթին, այնուհետև՝ նաև համայնքի յուրաքանչյուր ներկայացուցչի իրավունքի նկատմամբ, քանի որ եթե անգամ խոսքը մեկ անձի է ուղղված, սակայն պայմանավորված է նրա սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ, ապա վնասում է նաև նույն հատկանիշը կրող մյուս անձանց, իսկ երրորդ հերթին՝ նաև ամբողջ հասարակությանը:

21 ՀՀ սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, 42-րդ հոդված https://www.arlis.am/hy/acts/143723

2022 թ.-ի հուլիսին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ռասայի, ազգի, էթնիկական կամ սոցիալական ծագման, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի կամ այլ հիմքերի վրա անձի կամ խմբի նկատմամբ անձնական կամ սոցիալական բնույթի հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամություն հրահրելուն կամ քարոզելուն ուղղված խոսքի, ինչպես նաև այդ նպատակով նյութերի կամ առարկաների տարածման համար:

2022 թ.-ի մայիսի 17-ին հրապարակված Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով[22] վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը անդրադարձել է թե օրենսդրական կարգավորումների բացին, թե գործնականում դրանց անարդյունավետ կիրառմանը: Մասնավորապես, ***Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հստակ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ ատելության խոսքը կարգավորող իրավանորմը պետք է որպես պաշտպանված հատկանիշ ուղղակիորեն նախատեսի սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը,*** որպեսզի այն համարվի իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ԼԳԲՏ+ անձանց համար: Փաստացի, Հայաստանում ոչ միայն անգամ չի քննարկվել օրենսդրական կարգավորումներում լրացում անելու հարցը, այլ նաև շարունակում է անգործություն ցուցաբերվել ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ բռնության կոչերին համապատասխան իրավական արձագանք տալու հարցում: Այս իրադրությունը ևս մեկ անգամ փաստում է, որ բռնության կոչերի կամ արդարացման համար քրեական պատասխանատվություն նախատեսող քրեաիրավական նորմի առկա ձևակերպումը, որում նման խոսքից պաշտպանության ենթակա հատկանիշների ցանկում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ուղղակիորեն նշված չեն և միայն տրված է ***«անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներ» արտահայտությունը, չի կարող համարվել արդյունավետ գործիք:***

2025 թ. հունվարի 7-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հրապարակեց «Մինասյանն և ուրիշներ ընդդեմ Հայաստանի» գործով վճիռը՝ հաստատելով, որ Հայաստանը խախտել է մարդու հիմնարար իրավունքները:

Գործը վերաբերում էր «Իրավունք» թերթի կողմից 2014 թ. մայիսի 17-ին հրապարակված «Նրանք սպասարկում են միջազգային համասեռամոլ լոբբինգի շահերը. Ազգի և պետության թշնամիների սև ցուցակը» վերնագրով հոդվածին և հետագա նմանատիպ հրապարակումներին: Այդ հոդվածներում թերթը «սև ցուցակում» նշված անձանց մեղադրել էր «համասեռամոլության քարոզչության» մեջ, կոչ էր արել ցուցաբերել զրո հանդուրժողականություն և սահմանափակել նրանց գործունեության հնարավորությունները:

Հրապարակումների առիթը դարձել էր «Եվրատեսիլ 2014»-ում Հայաստանի ներկայացուցիչներ Ինգա և Անուշ Արշակյանների հարցազրույցը, որտեղ նրանք իրենց վերաբերմունքը արտահայտել էին ԼԳԲՏ+ համայնքի, մասնավորապես Ավստրիան ներկայացնող տրանսգենդեր արտիստ Կոնչիտա Վյուրսթի նկատմամբ՝ ասելով. «...ինչպես հոգեկան հիվանդն է հակակրանք առաջացնում, այնպես էլ նման երևույթները»:

Բացի մեղադրանքներից և խտրականության կոչերից, թերթի հրապարակումներում հայտնվել էին թիրախավորված անձանց անձնական տվյալները՝ նրանց նկատմամբ անհանդուրժողականություն և խտրական վերաբերմունք հրահրելու նպատակով:

14 դիմումատուներ, չստանալով բավարար իրավական պաշտպանություն Հայաստանի դատարաններում, դիմել էին Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

22 ՄԻԵԴ վճիռ, Օգանեզովան ընդդեմ Հայաստանի, 71367/12, 72961/12

Դատարանը արձանագրեց, որ ***Հայաստանը խախտել է դիմումատուների անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը՝ զուգորդված խտրականությունից զերծ լինելու իրավունքով: Դատարանը ընդգծեց, որ Հայաստանի Սահմանադրությամբ ամրագրված խտրականության արգելքը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված վիրավորանքի արգելքը բավարար չեն՝ պաշտպանելու անձանց հոմոֆոբ ատելության խոսքից: Դատարանի գնահատմամբ, հրապարակումների պատճառով վնաս էր պատճառվել անձանց հոգեկան ամբողջականությանը, արժանապատվությանը և պատվին, ինչը գործող իրավակարգավորումներով չի կանխվել կամ պատշաճորեն չի փոխհատուցվել: Պետությունը նաև չի ներկայացրել համոզիչ ապացույցներ, որ նման կարգավորումները կիրառվում են արդյունավետ ձևով:***

Դատարանի վճռով Հայաստանը պարտավորվում է ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու համար գործնական և արդյունավետ պաշտպանություն ատելության խոսքից, ներառյալ՝ խտրականության հրահրումից:

ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պետական մարմինների կողմից դեպքերի արձանագրումը

Սույն ուսումնասիրության շրջանակներում ՀՀ քննչական կոմիտեին էր ներկայացվել հարցում՝ ստանալու համար տեղեկատվություն առ այն, թե 2003 թ.-ի ՀՀ քրեական օրենսգրքում որպես լրացում 2020 թ.-ին ավելացված 226.2 և 2021 թ.-ի Քրեական օրենսգրքով նախատեսված 330-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմի շրջանակներում քանի վարույթ է նախաձեռնվել վերջին հինգ տարիների ընթացքում, դրանցից քանիսի պարագայում է հարուցվել քրեական գործ, քանիսն է մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան և քանիսով է կայացվել մեղադրական դատավճիռ: Պարզվել է, որ այս հոդվածի կիրառման պրակտիկայի վերաբերյալ տվյալներ չեն հավաքագրվում և վիճակագրություն չի վարվում:[23]

Հաշվի առնելով ՀՀ Կառավարության կողմից մշակված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թթ.-ի գործողությունների ծրագիրը, որտեղ որպես անհրաժեշտ քայլ նշված է ատելության խոսքի արգելքին ուղղված համապարփակ օրենսդրության մշակումը և այդ նպատակով ուսումնասիրությունը, ինչպես նաև պետական մարմինների նախաձեռնողականությունը մինչև համապարփակ օրենսդրության մշակումը ատելության խոսքի ծանր դրսևորումների համար քրեական պատասխանատվություն նախատեսելու ուղղությամբ՝ հարկ ենք համարում փաստել հետևյալը՝

> *Իրավահամակարգում նոր իրավակարգավորման արդյունավետության գնահատման առումով էական նշանակություն ունի դրա կիրառության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և վերլուծումը, ինչը թույլ կտա գնահատել, թե ինչպիսի խնդիրներ են առաջանում իրավախախտումների իրավական որակման, մեղադրանքի հիմքով դրված ապացուցողական նշանակություն ունեցող փաստակազմի հավաքագրման տեսանկյունից և հատկապես այն, թե արդյոք կարգավորումը ծառայում է իր նախապես հռչակված նպատակին:*

Այսպիսով, չունենալով հնարավորություն ստանալու որևէ համապարփակ տվյալ, սույն ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են դատական գործերի «Դատալեքս» առցանց հարթակում առկա գործերը:[24] Այսպես, դուրս բերված 23 գործերից 14-ը ավարտվել են մեղադրական դատավճռով, 7-ը՝ արդարացման դատավճռով, իսկ 2-ը կարճվել են վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Այս գործերով առաջին ատյանի դատարանի մեկնաբանությունները հակիրճ ներկայացված են ստորև: Հարկ է շեշտել, որ հատկապես ուշադրություն է դարձվել, թե ինչպես են դատարանները մեկնաբանում այս իրավակարգավորումը, արդյոք գնահատում են խոսքի համապատասխանությունը ատելության խոսքի ճանաչման միջազգային չափորոշիչներին և թե արդյոք դատարանի կողմից հղում կատարվում է արտահայտման ազատության պաշտպանությանն ուղղված երաշխիքներին:

Հաջորդ կարևոր հարցն այն է, թե ինչպիսի պաշտպանված հատկանիշով է պայմանավորված եղել խոսքը. արդյոք այն ուղղված է եղել քաղաքական հակառակորդների, ազգային կամ սեռական

23 Հարցման պատասխանը ներկայացված է հավելված 2-ում:
24 «Դատալեքս» առցանց հարթակ https://datalex.am/

փոքրամասնությունների, կրոնական խմբերի կամ այլ որևէ խմբի դեմ:

Ի վերջո, հատուկ ուշադրություն է դարձվել այն հարցին, թե որն է եղել դատարանի վերջնական գնահատման հիմքը մեղադրական կամ արդարացման վճիռներում. արդյոք առկա է օրենքի միատեսակ կիրառության խնդիր, թե ոչ:

Այս հարցերի պատասխանը թույլ կտա վերլուծել, թե

- արդյոք իրավակարգավորումը բավարար որոշակի է,
- արդյոք այն հանդիսանում է փոքրամասնությունների կամ խոցելի խմբերի պաշտպանության արդյունավետ գործիք
- և թե արդյոք ՀՀ դատարանը կիրառում է միջազգային մարմինների կողմից տրված մեկնաբանությունները:

Նշենք, միևնույն ժամանակ, որ սույն բաժնում մեջբերված չեն ենթադրյալ ատելության խոսք պարունակող արտահայտությունները՝ դրանց լրացուցիչ չտարածման շահից ելնելով, այնուամենայնիվ, գործերի համարների ցանկը՝ համապատասխ համարակալմամբ կցված է զեկույցին որպես Հավելված 1:

Գործ 1

Սույն գործով ամբաստանյալի խոսքը ուղղված է եղել Նիկոլ Փաշինյանի դեմ, այսինքն ունեցել է քաղաքական ենթատեքստ: Հատկանշական է, որ արտահայտման ազատության սահմանների, ոչ իրավաչափ խոսքի արգելքի կամ դրա համար քրեական պատասխանատվության սահմանման, ինչպես նաև ծանրության աստիճանի վերաբերյալ դատարանը որևէ մեկնաբանություն վճռում չի ներառել:

Կայացվել է մեղադրական դատավճիռ, որպես պատիժ է նշանակվել տուգանք:

Գործ 2

Սույն գործով ամբաստանյալի խոսքը ուղղված է եղել Քաղաքացիական պայմանագիր կուսակցության անդամ, ԱԺ պատգամավոր՝ Էդուարդ Աղաջանյանի դեմ, այսինքն, ունեցել է քաղաքական ենթատեքստ: Այս գործով ևս արտահայտման ազատության սահմանների, ոչ իրավաչափ խոսքի արգելքի կամ դրա համար քրեական պատասխանատվության սահմանման, ինչպես նաև ծանրության աստիճանի վերաբերյալ դատարանը որևէ մեկնաբանություն վճռում չի ներառել:

Կայացվել է մեղադրական դատավճիռ, որպես պատիժ է նշանակվել տուգանք:

Գործ 3

Քննարկվող արարքը դասվում է հասարակական անվտանգության դեմ հանցագործությունների շարքին: Այն ուղղված է պաշտպանելու ազգային, ռասայական, կրոնական, քաղաքական կամ այլ պատկանելության հիմքով անձանց ու խմբերի անվտանգությունը և հարաբերությունների սահմանադրական հիմքերը:

Այս հանցագործության բաղադրիչներն են.

- բռնության կոչեր, բռնության արդարացում կամ քարոզ, կամ նման նյութերի տարածում,
- այդ գործողությունների նպատակն է ձևավորել բռնություն գործադրելու վճռականություն այլ անձանց մեջ, արդարացնել կամ խրախուսել այն,
- արարքի դրդապատճառը պետք է լինի ռասայական, ազգային, կրոնական, քաղաքական կամ այլ նման հիմքով խտրականությունը:

Արարքի կատարման համար պահանջվում է ուղղակի դիտավորություն:

Դատարանը նշում է, որ բռնության կոչը ատելության խոսքի ձև է և դրա թույլատրելիությունը սահմանափակվում է՝ ելնելով հանրային անվտանգության և մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից: Դատարանը տալիս է որոշ կարևոր հասկացությունների մեկնաբանություններ, ինչպիսիք են, օրինակ՝

«Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություն»

Տեքստում հստակ սահմանում չի տալիս, բայց նշում է տեսակային օբյեկտը՝ «հասարակական անվտանգության ապահովմանն ուղղված հարաբերությունները»:

«Անմիջական օբյեկտ»

«Ազգային, ռասայական, կրոնական, քաղաքական և այլ հարաբերությունների սահմանադրական հիմքերը, ինչպես նաև այդ հարաբերությունների կապակցությամբ մարդու և քաղաքացու կամ մարդկանց խմբի անվտանգությունը»:

«Բռնություն»

«Բռնություն ասելով պետք է հասկանալ անձի կամ անձանց խմբի նկատմամբ նրանց կամքին հակառակ կամ կամքն անտեսելով դիտավորյալ ֆիզիկական ներգործության գործադրում»:

«Կոչ»

«Կոչ հասկացությունը՝ անձանց կամքի և գիտակցության վրա արված այնպիսի ազդեցություն է, որն ուղղված է անձանց կամ անձանց խմբի նկատմամբ այլ անձանց մոտ կամ նրանց կողմից բռնություն գործադրելու վճռականություն ձևավորելուն, անձանց մոտ այդպիսի բռնությունն արդարացնելուն, այն քարոզելուն կամ անձանց շրջանակում նշված նպատակներով նյութեր կամ առարկաներ տարածելուն»:

ԵՄ և ՄԻԵԴ պրակտիկայում հստակ տարբերակում են ազատ արտահայտման իրավունքը և ատելության խոսքը: Առաջինը պաշտպանվում է նույնիսկ սուր քննադատության դեպքում, հատկապես՝ քաղաքական կոնտեքստում, իսկ երկրորդը՝ բռնություն ու անհանդուրժողականություն հրահրող խոսքը, օրենքով կարող է ու պետք է սահմանափակվի:

Դատարանը հղում է անում հետևյալ ՄԻԵԴ գործերին՝ օրինակ բերելով, թե ինչպես ՄԻԵԴ-ն տարբերակում է թույլատրելի խոսքը (այդ թվում՝ սուր, վիրավորական, սադրիչ քննադատությունը) ատելության խոսքից (որն արդեն կարող է օրենքով սահմանափակվել).

Ինջալն ընդդեմ Թուրքիայի[25] *գործով վճռում ՄԻԵԴ-ը հաստատել է, որ պետությունը պետք է մեծ զսպվածություն ցուցաբերի քաղաքական խոսքը քրեականացնելու հարցում: Քաղաքական քննադատությունը չի կարելի ճնշել ատելության խոսքի պատրվակով, եթե այն բռնություն չի հրահրում: Շուրեկն ու Եզդիմիրն ընդդեմ Թուրքիայի*[26] *Գործով ևս ՄԻԵԴ-ը նշել է, որ պետությունը կարող է սահմանափակել խոսքը միայն երբ այն ուղղակիորեն հրահրում է բռնություն, ատելություն կամ անօրինական գործողություններ: Նույն դիրքորոշումը դատարանը վերահաստատել է Յալչիներն ընդդեմ Թուրքիայի*[27] *և Ֆարուք Տեմելն ընդդեմ Թուրքիայի*[28] *գործերով: Հանն ընդդեմ Թուրքիայի*[29] *գործով հաստատվում է, որ քաղաքական խոսքը լայնորեն պաշտպանված է, եթե անգամ վիրավորական կամ սադրիչ է:*

Քննարկվող գործի պարագայում դատարանը արձանագրել է, որ նրա հրապարակային գրառումները պարունակում են բռնության ուղղակի կոչեր վարչապետ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ՝ պայմանավորված նրա քաղաքական դիրքով ու հայացքներով: Գրառումները հրապարակվել են Facebook-ում և ուղղված են եղել բռնության կոչը տարածելուն ու խրախուսելուն: Դատարանը եզրակացրել է, որ նման կոչերը դուրս են քաղաքական քննադատության սահմաններից և ներկայացնում են ատելության խոսքի քրեականորեն հետապնդելի ձև: Խոսքի հեղինակի նկատմամբ որպես պատիժ կիրառվել է մեկ ամիս ազատազրկումը:

Գործ 4

Սույն գործով ամբաստանյալի խոսքը ուղղված է եղել Նիկոլ Փաշինյանի դեմ, այսինքն ունեցել է քաղաքական ենթատեքստ: Արտահայտման ազատության սահմանների, ոչ իրավաչափ խոսքի արգելքի կամ դրա համար քրեական պատասխանատվության սահմանման, ինչպես նաև ծանրության աստիճանի վերաբերյալ դատարանը որևէ մեկնաբանություն վճռում չի ներառել:

Սույն գործով ամբաստանյալը ընդունել է մեղքը և կայացել է համաձայնության վարույթ, որպես պատիժ կիրառվել է տուգանք՝ 100 000 ՀՀ դրամի չափով:

Գործ 5

Սույն գործով ամբաստանյալը մեղավոր է ճանաչվել Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության պետ Ռոմանոս Պետրոսյանի հանրային գործունեությամբ, աշխարհայացքով, քաղաքական հայացքներով, կուսակցական պատկանելությամբ պայմանավորված հրապարակային՝ իր «հետևորդների», «ընկերների» և կայքէջ մուտք գործած այլ օգտատերերի համար անմիջականորեն տեսանելի եղանակով բռնություն գործադրելու հրապարակային կոչ պարունակող մեկնաբանություն կատարելու համար:

Ամբաստանյալը ընդունել է մեղքը և կայացել է համաձայնության վարույթ, որպես պատիժ կիրառվել է հանրային աշխատանքների իրականացումը:

25 ՄԻԵԴ վճիռ, Ինջալն ընդդեմ Թուրքիայի
26 ՄԻԵԴ վճիռ, Շուրեկը և Օզդեմիրն ընդդեմ Թուրքիայի
27 ՄԻԵԴ վճիռ, Յալչին Կուչուկն ընդդեմ Թուրքիայի
28 ՄԻԵԴ վճիռ, Ֆարուկ Թեմելն ընդդեմ Թուրքիայի
29 ՄԻԵԴ վճիռ, Հանն ընդդեմ Թուրքիայի

Գործ 6

Սույն գործով քննության առարկա խոսքը ուղղված է եղել Նիկոլ Փաշինյանի դեմ, այսինքն՝ քաղաքական ենթատեքստ է պարունակել: Վճռում դատարանը կրկին բավականին մանրամասն մեկնաբանել էր ՀՀ քրեական օրենսգրքի 226.2 հոդվածի էությունը, նշելով, որ տվյալ հոդվածի 1-ին

մասով նախատեսված հանցակազմն ունի երկու պարտադիր օբյեկտիվ հատկանիշ՝

- բռնություն գործադրելու հրապարակային կոչ (կամ նման բռնության արդարացում / քարոզ),
- և այդ կոչերի պայմանավորվածությունը հոդվածում նշված հատկանիշներով (օր.՝ սեռ, ռասա, ազգություն, քաղաքական կամ այլ հայացքներ և այլն):

Դատարանի գնահատմամբ մեղադրական եզրակացության մեջ երկրորդ պարտադիր հատկանիշը բացակայում է: Այնտեղ միայն խոսք կա «բռնություն գործադրելու հրապարակային կոչերի» մասին, առանց որևէ փաստական հիմնավորման, թե դա պայմանավորված է հոդվածով նշված որևէ խտրական մոտիվով:

Դատարանը գտնում է, որ այս բացի պատճառով մեղադրանքի ձևակերպումը չի բավարարում իրավական որոշակիության պահանջին (ՔՕ 226.2-րդ հոդվածի պահանջներին), հետևաբար հանցակազմ չկա:

Հղում կատարելով ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանությանը[30], դատարանը նշել է՝ «Բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ անձի կամքին հակառակ կատարված արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, սահմանափակվել է ազատությունը, առողջությանը վնաս է պատճառվել և այլն»:

Դատարանն իր հիմնավորումներում անդրադարձել է նաև իրավական որոշակիության պահանջին: Այսպես, ըստ դատարանի, «Բռնության հրապարակային կոչերը» որպես քրեորեն պատժելի արարք պետք է օրենքի համապատասխանությամբ կոնկրետորեն կապված լինեն այնտեղ թվարկված հիմքերից որևէ մեկի հետ: Մեղադրանքի ձևակերպումը պարտադիր պետք է այդ կապը հստակ ցույց տա՝ հստակ և որոշակիորեն, որպեսզի լինի օրենքի պահանջած չափով կանխատեսելի և հասկանալի: Դրա բացակայությունը խախտում է քրեական օրենքի որոշակիության սկզբունքը, որն ըստ Սահմանադրության և ՄԻԵԴ պրակտիկայի, քրեական պատասխանատվության հիմքը պետք է լինի հստակ և կանխատեսելի օրենք:

Դատարանը եզրակացրել է, որ 226.2 հոդվածի 1-ին մասով հանցակազմ չկա, քանի որ մեղադրանքում բացակայում է բռնության կոչերի խտրական մոտիվը (օրենքով պարտադիր հատկանիշը), իսկ ապացույցները նույնպես բավարար չեն մեղավորության համար: Ամբաստանյալը անմեղ է ճանաչվել:

Գործ 7

Սույն գործով ամբաստանյալի խոսքը ուղղված է եղել Նիկոլ Փաշինյանի դեմ, այսինքն ունեցել է քաղաքական ենթատեքստ: Արտահայտման ազատության սահմանների, ոչ իրավաչափ խոսքի արգելքի կամ դրա համար քրեական պատասխանատվության սահմանման, ինչպես նաև ծանրության աստիճանի վերաբերյալ դատարանը որևէ մեկնաբանություն վճռում չի ներառել:

Սույն գործով ամբաստանյալը մեղավոր է ճանաչվել, որպես պատիժ է կիրառվել վեց ամսով ազատության սահմանափակումը:

30 ՀՀ Վճռաբեկ դատարանի 01.11.2012 թ. թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշում, 18-րդ կետ

Գործ 8

Սույն գործով ենթադրյալ ատելության խոսքի հեղինակը քաղաքական գործիչ, նախկին պատգամավոր Արագած Ախոյան է, ով հրապարակայնորեն արդարացրել է Երևան քաղաքի Ֆրանսիայի հրապարակ կոչվող հատվածում Գրիգոր Հարությունյանի և Ռոման Բաղդասարյանի միջև քաղաքական հայացքներով պայմանավորված տեղի ունեցած ծեծկռտուքը և Ռոման Վալերի Բաղդասարյանի և այլ ակտիվիստների նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ հրապարակայնորեն կոչեր է հնչեցրել:

Գործը կարճվել է երկու տարի անց՝ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

Գործ 9

Սույն գործով ամբաստանյալի խոսքը ուղղված է եղել Նիկոլ Փաշինյանի դեմ, այսինքն ունեցել է քաղաքական ենթատեքստ: Արտահայտման ազատության սահմանների, ոչ իրավաչափ խոսքի արգելքի կամ դրա համար քրեական պատասխանատվության սահմանման, ինչպես նաև ծանրության աստիճանի վերաբերյալ դատարանը որևէ մեկնաբանություն վճռում չի ներառել:

Սույն գործով ամբաստանյալը մեղավոր է ճանաչվել, որպես պատիժ է կիրառվել մեկ ամիս ազատազրկումը:

Գործ 10

Սույն գործով ամբաստանյալի խոսքը ուղղված է եղել Նիկոլ Փաշինյանի և իր թիմակիցների դեմ, այսինքն ունեցել է քաղաքական ենթատեքստ: Արտահայտման ազատության սահմանների, ոչ իրավաչափ խոսքի արգելքի կամ դրա համար քրեական պատասխանատվության սահմանման, ինչպես նաև ծանրության աստիճանի վերաբերյալ դատարանը որևէ մեկնաբանություն վճռում չի ներառել:

Սույն գործով ամբաստանյալը ընդունել է, որ սխալ է և զղջում է իր արարքի համար մեղավոր է ճանաչվել, որպես պատիժ է կիրառվել տուգանքը:

Գործ 11

Սույն գործով ամբաստանյալի խոսքը ուղղված է եղել Գառնիկ Իսագուլյանի, Արթուր Վանեցյանի, Սերժ Սարգսյանի, Ռոբերտ Քոչարյանի, Վազգեն Մանուկյանի և Իշխան Սաղաթելյանի դեմ, այսինքն ունեցել է քաղաքական ենթատեքստ: Արտահայտման ազատության սահմանների, ոչ իրավաչափ խոսքի արգելքի կամ դրա համար քրեական պատասխանատվության սահմանման, ինչպես նաև ծանրության աստիճանի վերաբերյալ դատարանը որևէ մեկնաբանություն վճռում չի ներառել:

Սույն գործով ամբաստանյանը ընդունել է իր մեղքը, կայացել է համաձայնության վարույթ և որպես պատիժ նշանակվել է տուգանք:

Գործ 12

Սույն գործով ամբաստանյալի խոսքը ուղղված է եղել Նիկոլ Փաշինյանի և իր թիմակիցների դեմ, այսինքն ունեցել է քաղաքական ենթատեքստ: Արտահայտման ազատության սահմանների, ոչ իրավաչափ խոսքի արգելքի կամ դրա համար քրեական պատասխանատվության սահմանման, ինչպես նաև ծանրության աստիճանի վերաբերյալ դատարանը որևէ մեկնաբանություն վճռում չի ներառել:

Սույն գործով ամբաստանյալը մեղավոր է ճանաչվել, որպես պատիժ է կիրառվել տուգանքը:

Գործ 13

Դատարանը նշել է, որ սույն գործով քննության առարկա գրառումը վերաբերում էր 44-օրյա պատերազմից հետո ստեղծված ներքաղաքական իրավիճակին, ուստի այն քաղաքական խոսքի դաշտում է:

Վերլուծել է բովանդակությունը և եզրակացրել, որ այն չի պարունակում բռնության հրապարակային կոչ, չի արդարացնում և չի քարոզում բռնություն:

Դատարանը նաև շեշտել է, որ գրառման հեղինակը նշել է. «չնայած կազմակերպիչներին չեմ քննադատում, քանզի նրանք խուսափում են արյունահեղությունից», ինչը փաստում է, որ չի խրախուսում բռնություն:

Դատարանը հղում է կատարել ՀՀ Սահմանադրություն, 42-րդ հոդվածին և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածին, որոնք նախատեսում են արտահայտման ազատությունը և սահմանում, որ այն կարող է սահմանափակվել միայն օրենքով, անհրաժեշտության և համաչափության սկզբունքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի և այլոց իրավունքների պաշտպանության համար:

Մեջբերելով ՄԻԵԴ դիրքորոշումները, դատարանը, մասնավորապես արձանագրել է, որ քաղաքական խոսքը առավել պաշտպանված տեսակ է[31] և որ պետության պարտականությունն է զսպվածություն ցուցաբերել, երբ խոսքը վերաբերում է քաղաքական քննադատությանը:[32] Մեկ այլ վճռից մեջբերվել է դիրքորոշում առ այն, որ քաղաքական գործիչների հանդեպ քննադատության սահմանները ավելի լայն են և որ վիճահարույց խոսքը չի արգելվում, եթե դա պարզապես վիրավորական կամ սադրիչ է, բայց չի պարունակում բռնության կոչ կամ ատելության քարոզ:[33]

Դատարանը սույն գործով եզրակացրել է, որ հայտարարությունը պաշտպանված է արտահայտման ազատությամբ (ՀՀ Սահմանադրություն, 42-րդ հոդված, Կոնվենցիա, 10-րդ հոդված), չի պարունակում բռնության կոչ, և բացակայում է 226.2 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը, հետևաբար ամբաստանյալը արդարացվել է:

Գործ 14

Սույն գործի առիթ հանդիսացած խոսքի հեղինակը հասարակական գործիչ Նարեկ Մալյանն է:

31 ՄԻԵԴ վճիռ, Ֆարուկ Թեմելն ընդդեմ Թուրքիայի
32 ՄԻԵԴ վճիռ, Ինջալն ընդդեմ Թուրքիայի
33 ՄԻԵԴ վճիռ, Յալչինկայան և մյուսներն ընդդեմ Թուրքիայի

Տեքստը փաստարկում է, որ Նարեկ Մալյանի հրապարակումները չեն անցնում ատելության խոսքի իրավական սահմանը, այլ հանդիսանում են պաշտպանված քաղաքական և սատիրիկ խոսք՝ ըստ ՄԻԵԴ-ի և միջազգային իրավունքի չափորոշիչների:

Դատարանը հողում է կատարել կրկին արտահայտման ազատության և ատելության խոսքի արգելքի վերաբերյալ ՄԻԵԴ դիրքորոշումներին՝ կապված քաղաքական խոսքի առավել պաշտպանված լինելու հետ: Այն մասնավորապես նշում է, որ ատելության խոսքը սահմանափակվում է բռնության, ատելության կամ անհանդուրժողականության ուղղակի կամ անուղղակի հրահրմամբ: Քաղաքական, սատիրիկ, վիրավորական, սարկաստիկ կամ ցնցող խոսքը չի համարվում ատելության խոսք, եթե բացակայում է բռնություն հրահրելու հստակ դիտավորություն:

Դատարանը իր վճռի հիմքում է դրել նաև Եվրոպայի խորհրդի Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնախմբի թիվ 15 հանձնարարականին, ինչպես նաև Ռաբաթի գործողությունների ծրագրով նախատեսված վեցաստիճան թեստին՝ որոշելու համար խոսքի բնույթն ու վտանգավորությունը:

Այսպիսով, դատարանը Նարեկ Մալյանի կողմից արտահայտված խոսքը որակել է որպես փոխաբերական, սատիրիկ խոսք, որը բռնության կոչի միտում չունի, դրանից բխող վնասի իրական հավանականությունը բացակայում է: Դատարանը նաև նշել է, որ չի ներկայացվել որևէ ապացույց ամբաստանյալի դիտավորության վերաբերյալ:

Գործ 15

Սույն գործի առիթ հանդիսացած գրառման հեղինակը Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության անդամ է և իր մեկնաբանությունները կրել են քաղաքական բնույթ, ուղղված են եղել իշխանությունների դեմ: Դատարանը փաստել է, որ քննության ընթացքում բավարար չի վերլուծվել նրա քաղաքական դերը, խոսքի համատեքստը, դիտավորյալ բռնություն հրահրելու ապացույցները:

Դատարանը, կրկին հողում կատարելով ՄԻԵԴ մեկնաբանություններին, արձանագրում է, որ խոսքի ազատությունը կարող է սահմանափակվել օրենքով՝ անվտանգությունը, հասարակական կարգը, առողջությունը, բարոյականությունը, կամ այլոց իրավունքներն ու պատիվը պաշտպանելու համար և որ քաղաքական խոսքը՝ իշխանություններին քննադատող խոսքը, հատուկ պաշտպանության արժանացած տեսակ է, իսկ իշխանություններին քննադատելու խոսքի հանդեպ պետությունը պետք է ավելի հանդուրժող լինի: Քրեական պատասխանատվություն կիրառել կարելի է միայն, եթե խոսքը իրականում բռնություն, ատելություն, անհանդուրժողականություն է հրահրում:

Դատարանը, մասնավորապես, պատճառաբանել է, որ՝

- Մեղադրանքը հիմնված է ենթադրությունների վրա և քրեական պատասխանատվության համար պահանջվող «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական շեմը չի հաղթահարվել:
- Օբյեկտիվ, բազմակողմանի, թույլատրելի և փոխկապակցված ապացույցների համակցություն չկա, որը կհաստատի, որ անձը իրականում բռնություն հրահրել կամ արդարացրել է:
- Ըստ քրեական դատավարության օրենքի 18-րդ հոդվածի՝ բոլոր չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի («in dubio pro reo» սկզբունք):
- Ամբաստանյալը անմեղ է ճանաչվել՝ ապացույցների անբավարարության հիմքով:

Գործ 16

Քննվող գործի առիթ հանդիսացած խոսքի հեղինակը հասարակական-քաղաքական գործիչ Պավել Մանուկյանն է եղել, այն կրել է քաղաքական բնույթ:

Քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Գործ 17

Սույն գործով ամբաստանյալի խոսքը ուղղված է եղել Նիկոլ Փաշինյանի դեմ, այսինքն ունեցել է քաղաքական ենթատեքստ: Արտահայտման ազատության սահմանների, ոչ իրավաչափ խոսքի արգելքի կամ դրա համար քրեական պատասխանատվության սահմանման, ինչպես նաև ծանրության աստիճանի վերաբերյալ դատարանը որևէ մեկնաբանություն վճռում չի ներառել, դատարանը մեկնաբանել է միայն պատժաչափի ընտրման մոտեցումը: Իրականացվել է արագացված դատաքննություն, ամբաստանյալը մեղավոր է ճանաչվել, որպես պատիժ է կիրառվել տուգանքը:

Գործ 18

Դատական այս դիրքորոշումը վեր է հանում «ատելության խոսքի» և խոսքի ազատության միջև եղած սահմանը՝ արձանագրելով, որ խոսքի ազատությունը չի կարող պաշտպանել բռնության կոչերն ու դրանք արդարացնող արտահայտությունները, հատկապես երբ դրանք ուղղված են անձանց կամ խմբերի դեմ իրենց նույնականացման հատկանիշների պատճառով, ինչպիսիք են սեռը, ռասան, մաշկի գույնը, էթնիկական կամ սոցիալական ծագումը, լեզուն, կրոնը, աշխարհայացքը կամ քաղաքական հայացքները: Դատարանը ընդգծում է, որ այդպիսի կոչերն ու քարոզը խոսքի ազատության շրջանակից դուրս են ընկնում և որ դրանք միջազգային ու ներպետական իրավունքի տեսակետից դիտվում են որպես «ատելության խոսքի» ծայրահեղ դրսևորումներ:

Այս կոնկրետ գործով դատարանը մանրամասնորեն վերլուծել է ամբաստանյալի խոսքը, ուղղված է եղել գործող իշխանությունների դեմ: Դատարանը փաստում է, որ նման գրառումը հստակ հասկանալի է որպես բռնության հրապարակային կոչ՝ քաղաքական հայացքներով պայմանավորված, և արձագանքներ է առաջացրել սոցիալական ցանցի այլ օգտատերերի շրջանում, որոնք գրառման ներքևում քննարկել են միջոցառման ժամանակը և վայրը: Այս հանգամանքը դատարանի գնահատմամբ վկայում է, որ նման հրապարակումը ունի ոչ միայն տեսական, այլ նաև գործնական վտանգավորություն՝ իրական մարդկանց վրա ազդելու և բռնություն հրահրելու առումով:

Ավելին, դատարանը անդրադառնում է ամբաստանյալի պաշտպանական կողմի այն փաստարկին, որ գրառումը պարզապես հուզական պոռթկում է եղել պատերազմից հետո առաջացած սթրեսի պայմաններում, և որ չի եղել ուղղակի դիտավորություն բռնություն կազմակերպելու: Դատարանը, սակայն, մերժում է այդ դիրքորոշումը, գտնելով, որ ամբաստանյալը գիտակցել է իր գրառման հրապարակային բնույթը և նախատեսել է, որ այն տեսանելի կլինի անսահմանափակ թվով անձանց: Այդ գիտակցված հրապարակայնությունը և բռնության ուղղակի կոչերը դուրս են բերում գրառումը «պարզ քննադատության» կամ «անպատեհ լեզվի» ոլորտից և դարձնում այն քրեական օրենքով արգելված ատելության խոսք:

Դատական որոշումը հիմնվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 226.2 հոդվածի ձևական կազմի վրա. այս հոդվածի դեպքում հանցակազմը կայանում է հենց բռնության հրապարակային կոչ անելու մեջ, և դրա համար պարտադիր չէ, որ այդ կոչն անպայման հանգեցնի բռնության փաստացի իրագործման:

Այնուհետև դատարանը անդրադառնում է հանրային վտանգավորության հարցին՝ օգտագործելով Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը: Ըստ այդ դիրքորոշման՝ անգամ եթե որևէ արարք ձևականորեն համապատասխանում է քրեական օրենքով նախատեսված արարքի հատկանիշներին, այն քրեորեն հետապնդելի չէ, եթե հանրային վտանգավորություն չունի կամ նվազ կարևոր է: Սակայն դատարանը նշում է, որ սույն գործով ամբաստանյալի գրառման պարագայում չի կարելի խոսել նվազ կարևորության մասին, քանի որ դա եղել է դիտավորյալ հրապարակային բռնության կոչ՝ հստակ բռնարար և ատելություն հրահրող լեզվով, ու այն իրական ազդեցություն է ունեցել հանրության վրա՝ որոշ մարդկանց մղելով արձագանքել և կոնկրետ քայլեր քննարկել:

Դատարանը նաև փաստում է, որ արարքի հանրային վտանգավորությունը պետք է գնահատել հենց արարքի բովանդակությամբ և բնույթով, ոչ թե անձի՝ պատերազմին մասնակցելու, «փողոցի դաստիարակություն» ունենալու կամ հետագայում զղջալու նման հանգամանքներով, որոնք կարող են միայն պատժաչափի որոշման ժամանակ դեր ունենալ, բայց չեն վերացնում արարքի քրեաիրավական բնույթը:

Ամբողջությամբ վերցրած՝ դատարանի մոտեցումը բավական կոշտ և հստակ է. բռնության հրապարակային կոչերը, հատկապես երբ դրանք ուղղված են քաղաքական կամ այլ խմբի դեմ, խոսքի ազատությամբ պաշտպանված չեն և կարող են արժանանալ քրեական պատասխանատվության: Դատական այս մոտեցումը հետևողականորեն հիմնավորված է միջազգային իրավական փաստաթղթերով, Եվրոպական դատարանի նախադեպերով և Հայաստանի ներպետական քրեական օրենսդրությամբ:

Այսպես, Դատարանը ամբաստանյալին մեղավոր է ճանաչել և որպես պատիժ նշանակել տուգանքը:

Գործ 19

Սույն գործի քննության առարկա խոսքի հեղինակը նախկին ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանն է: Դատարանը արդարացնող վճիռ է կայացրել, հետևյալ հիմնավորմամբ՝

Դատարանը սկզբում ընդգծում է, որ Հայաստանի Սահմանադրության 42-րդ հոդվածը և ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածը ճանաչում են յուրաքանչյուր անձի՝ իրավունք ունենալու և արտահայտելու սեփական կարծիքը, ինչպես նաև ազատորեն տեղեկատվություն փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը:

Սակայն խոսքի ազատությունը չի պաշտպանում ամեն ինչ. տեքստում պարզաբանվում է, որ Եվրոպական դատարանը տարբերակում է թույլատրելի վիրավորական կամ սադրիչ խոսքը և ատելության խոսքը: Թույլատրելի են այն արտահայտությունները, որոնք կարող են վիրավորել, ցնցել կամ անհանգստացնել պետությանը կամ հանրության մի մասին՝ քանի դեռ չեն պարունակում բռնության կոչեր կամ նպատակ չունեն ատելություն հրահրելու: Իսկ ահա բռնության կոչերը, իրական ատելության և անհանդուրժողականության հորդորները դուրս են ազատ խոսքի պաշտպանության տիրույթից և կարող են օրինական սահմանափակվել:

Դատարանը հղում է կատարել ՄԻԵԴ-ի երկու վճիռների, որոնք օգնում են հասկանալ այս տարբերությունը: Առաջին օրինակը Թուրքիայի գործն է՝ Ֆարուք Տեմելի դեմ, որտեղ նա քննադատել էր ԱՄՆ քաղաքականությունը և իր երկրի ղեկավարությանը, սակայն նրա խոսքում բռնության կոչ չկար: ՄԻԵԴ-ն արձանագրեց, որ Թուրքիան խախտել էր նրա խոսքի ազատությունը՝ քրեական հետապնդում կիրառելով քաղաքական քննադատության համար: Սա ցույց է տալիս դատարանի մոտեցումը, որ քաղաքական խոսքը կոշտ ձևով արտահայտված պետք է հատուկ պաշտպանվի:

Մյուս օրինակը Սավվա Տերենտևի գործն է Ռուսաստանի դեմ, որտեղ նա սոցիալական ցանցում

տեղադրել էր շատ կոշտ և հիպերբոլիկ մեկնաբանություն ոստիկանների վերաբերյալ՝ «վառարան գցելու» մասին: Չնայած այս արտահայտությունն իր բնույթով ագրեսիվ էր և սարկաստիկ, դատարանը գտավ, որ իրական բռնության կոչ չի պարունակում և չի ուղղված ատելության հրահրման, ուստի չի կարելի այն քրեականացնել:

Դատարանը մեկնաբանել է քննվող տեքստը նաև Ռաբաթի գործողությունների ծրագրի վեցաստիճան թեստի համատեքստում, որտեղ կարևոր է հաշվի առնել՝ *համատեքստը, հեղինակի նպատակը և դիտավորությունը, բովանդակության ձևը, արտահայտության ուժգնությունը և վնասի իրական հավանականությունը:*

Ընդհանուր եզրափակիչ մտքերը ցույց են տալիս, որ խոսքի ազատությունը լայն պաշտպանություն ունի նաև վիրավորական և սադրիչ արտահայտությունների համար: Բայց այդ ազատությունը չի կարող ծածկոց լինել այն խոսքի համար, որը ուղղակիորեն հրահրում է բռնություն կամ տարածում է ատելություն և անհանդուրժողականություն տարբեր խմբերի նկատմամբ: Պետությունը պարտավոր է զգուշորեն, խիստ հիմնավորված և համաչափ կերպով սահմանափակել այդ իրավունքը միայն այն դեպքերում, երբ դա իրական անհրաժեշտություն է ժողովրդավարական հասարակության մեջ:

Գործ 20

Սույն գործով ամբաստանյալի խոսքը ուղղված է եղել Նիկոլ Փաշինյանի դեմ, այսինքն ունեցել է քաղաքական ենթատեքստ: Արտահայտման ազատության սահմանների, ոչ իրավաչափ խոսքի արգելքի կամ դրա համար քրեական պատասխանատվության սահմանման, ինչպես նաև ծանրության աստիճանի վերաբերյալ դատարանը որևէ մեկնաբանություն վճռում չի ներառել:

Սույն գործով ամբաստանյալը մեղավոր է ճանաչվել, որպես պատիժ է կիրառվել տուգանքը:

Գործ 21

Սույն գործով քննության առարկա խոսքի հեղինակը փաստաբան Մուշեղ Շուշանյանն է: Դատարանը նրան մեղավոր է ճանաչել, հետևյալ հիմնավորմամբ՝

Դատարանը մեկնաբանել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի վերլուծությունն առ այն, որ պետությունը կարող է սահմանափակել արտահայտվելու ազատությունը միայն կոնկրետ, օրենքով նախատեսված նպատակներով և անհրաժեշտության պայմանով:

Սահմանելու համար քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց շրջանակը՝ դատարանը հղում է կատարել «Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի» 5-րդ հոդվածին, որը՝

- 1-ին մաս – սահմանում է քաղաքական պաշտոնի իմաստը (քաղաքական որոշումներ, քաղաքական պատասխանատվություն)
- 2-րդ մաս – թվարկում է պետական քաղաքական պաշտոնները (նախագահ, վարչապետ, ԱԺ պատգամավորներ և այլն):

Այսպիսով, դատարանը եզրակացրել է, որ ամբաստանյալը քաղաքական գործիչ չի հանդիսանում:

Հստակեցնելու համար ատելության խոսքի սահմանումն ու սահմանները, դատարանը հղում է կատարել ՌԱԵՀ 15-րդ հանձնարարականին, ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական իրավունքների

մասին դաշնագրի 20(2) հոդվածին, ՄԻԵԴ մեկնաբանություններին:

Այսպիսով, դատարանը մեջբերել է, որ ատելության խոսքը խոսք կամ արտահայտություն է, որը մարդկանց դեմ թշնամանք, խտրականություն կամ բռնություն է հրահրում նրանց ինքնության որևէ հիմնարար հատկանիշով պայմանավորված:

Այն վերահաստատում է, որ «Բռնության կոչերը ատելության խոսքի ծայրահեղ ձևն են», ինչը միջազգային իրավունքի ստանդարտ մոտեցում է:

Հղում կատարելով ՄԻԵԴ[34] նախադեպային իրավունքին՝ դատարանը մեջբերել է վերլուծությունն առ այն, որ քաղաքական խոսքը ունի առավել բարձր պաշտպանություն, քաղաքական գործիչների քննադատությունը ավելի լայնորեն թույլատրելի է:

Ըստ Դատարանի եզրահանգման՝ ամբաստանյալը քաղաքական գործիչ չէ, այսինքն նա չի օգտվում քաղաքական խոսքի բարձր մակարդակի պաշտպանությունից:

Միևնույն ժամանակ դատարանը վերլուծել է դեպքը Ռաբաթի գործողությունների ծրագրի վեցաստիճան թեստի միջոցով, անդրադառնալով խոսքի հեղինակի ազդեցությունը («հետևորդների լայն զանգված») դիտավորությունը («ցանկացել է, գիտակցել է»), վնասի հնարավորություն («արձագանքել են՝ մեկնաբանություններով»): Ինչը, ըստ դատարանի կարող է հանգեցնել իրական բռնության՝ որպես հետևանք:

Միևնույն ժամանակ դատարանը նշել է, որ Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը ձևական հանցակազմ է, այսինքն պատասխանատվությունը վրա է հասնում անկախ խոսքի հետևանքներից: Այսինքն, բռնության հրապարակային կոչն ինքնին հանցագործություն է:

Դատարանը, այսպիսով, եզրակացրել է՝

- Քաղաքական խոսքը առավել պաշտպանված է, երբ վերաբերում է հանրային կարևոր թեմային, հատկապես քաղաքական դերակատարի կողմից: Ամբաստանյալը քաղաքական գործիչ չի եղել (չի վայելում քաղաքական խոսքի առավելագույն պաշտպանություն):
- Բայց բռնության կոչերը, նույնիսկ քաղաքական բանավեճի շրջանակում, դուրս են ազատ խոսքի պաշտպանությունից. Ամբաստանյալը հնչեցրել է բռնության կոչեր անձի նկատմամբ՝ քաղաքական հայացքների հիմքով, հրապարակումն ունեցել է ազդեցություն լսարանի վրա:

Մուշեղ Շուշանյալը մեղավոր է ճանաչվել, սակայն պատասխանատվության վաղեմության ժամկետի անցնելու հիմքով ազատվել է քրեական պատասխանատվությունից:

Գործ 22

Դատարանը նշում է, որ մեղադրանքի մեջ բացակայում են կարևորագույն տարրերը՝

- Հանցանքի տեղի և ժամանակի հստակեցում՝ ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն անհրաժեշտ նախապայման է մեղադրանքի լիարժեքության համար:
- Չկա փաստական հիմք, որը կվկայեր մեղադրյալ Արամ Հարությունյանի տեղյակ լինելու մասին, որ իր ելույթը նկարահանվում է և կարող է հրապարակայնացվել:

34 ՄԻԵԴ վճիռներ, Լինգենսն ընդդեմ Ավստիայի, Քասթելսն ընդդեմ Իսպանիայի, Ֆարուկ Թեմելն ընդդեմ Թուրքիայի

- Օգտագործված ապացույցը՝ YouTube տեսանյութը, չունի հստակ աղբյուր, տարածման նպատակ, ստեղծման համատեքստ, ինչը խաթարում է ապացույցի վստահելիությունը:

Դատարանը մատնանշում է, որ նախաքննական մարմինը չի հիմնավորել, թե ինչու Ամբաստանյալի խոսքը համապատասխանում է Քրեական օրենսգրքի 226.2 հոդվածի հատկանիշներին, որը, մասնավորապես, ենթադրում է հետևյալ հանգամանքների համաժամանակյա առկայություն՝

- բռնության կոչեր, քարոզ, արդարացում,
- և դրա՝ նպատակային կապը քաղաքական կամ այլ հայացքների հետ:

Հղում կատարելով ՌԱԵՀ 15-րդ հանձնարարականին, դատարանը մեջբերել է, մեկնաբանությունն առ այն, որ ատելության խոսքի նորմերը չպետք է օգտագործվեն՝

- քաղաքական ընդդիմախոսությունը լռեցնելու համար,
- ազատ արտահայտման իրավունքը ճնշելու նպատակով:

Դատարանը վերահաստատել է, որ ատելության խոսքի դրույթները պետք է օգտագործվեն մարդկանց՝ անհատներին կամ խմբերին պաշտպանելու, ոչ թե գաղափարների դեմ կամ քաղաքական պնդումների դեմ պայքարելու համար:

Այս սկզբունքն ուժեղացնում է ազատ խոսքի պաշտպանությունը, հատկապես քաղաքական համատեքստում:

Հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանություններին, դատարանը նշել է, որ քաղաքական խոսքը գտնվում է մաքսիմալ պաշտպանության ներքո, անգամ եթե այն վրդովեցնող է, բայց ոչ՝ բռնություն հրահրող:

Անդրադառնալով Ռաբաթի գործողությունների ծրագրում սահմանված վեցաստիճան թեստին, դատարանը փաստում է, որ ամբաստանյալի խոսքը չի բավարարում այդ չափանիշներին, և չի վերածվում ատելության խոսքի:

Դատարանը հղում է կատարել նաև ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածին, որի համաձայն. «ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի նորմերը գերակա են օրենքների նորմերի նկատմամբ»: Այս հիմքով դատարանը նշում է, որ ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ որոշումների կիրառումը պարտադիր է, և դրանցով պետք է առաջնորդվեն նաև ներպետական ատյանները:

Դատարանը իր մեկնաբանության հիմքով դրել է Ֆարուք Տեմելն ընդդեմ Թուրքիայի գործով ՄԻԵԴ նախադեպային վճիռը, որի փաստերը հետևյալն էին՝

դիմումատուն՝ ընդդիմադիր կուսակցության նախագահ, հանդես է եկել քննադատական ելույթով՝ առանց բռնության կոչերի: Նրա նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ բռնության արդարացման հիմքով:

ՄԻԵԴ-ը որոշել է, որ՝

- Ելույթը քաղաքական էր,
- Չէր պարունակում բռնության, անհանդուրժողականության կամ ատելության կոչեր,
- Պատիժը անհամաչափ էր,

- Խախտվել էր Կոնվենցիայի 10-րդ հոդվածը:

Նույն հիմնավորմամբ դատարանը կայացրել է արդարացման վճիռ:

Գործ 23

Սույն գործի առիթ հանդիսացած խոսքի հեղինակը ՀՀ նախկին վարչապետ, նախկին ԱԺ պատգամավոր, տնտեսագետ Հրանտ Բագրատյանն է, ում խոսքը ուղղված է եղել իշխանությունների դեմ և կրել է քաղաքական բնույթ:

Դատարանը վերահաստատել է, որ արտահայտման ազատության իրավունքները ներառում են նաև ցնցող կամ սադրիչ խոսքի ազատ արտահայտման իրավունքը, եթե այն չի խթանում ատելություն, բռնություն կամ անհանդուրժողականություն:

Դատարանը առանձնահատուկ պաշտպանություն է ցուցաբերում քաղաքական խոսքին՝ ընդգծելով, որ խոսքի ազատության սահմանափակումը պետք է լինի՝

- օրենքով նախատեսված,
- ծառայի լեգիտիմ նպատակների (պետական անվտանգություն, հասարակական կարգ, առողջություն, բարոյականություն, ուրիշների իրավունքներ և այլն),
- և լինի անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում:

Դատարանը կրկին հղում է կատարել վերը քննարկված մի շարք ՄԻԵԴ վճիռների (օր.՝ *Ֆարուք Տեմելն ընդդեմ Թուրքիայի, Հանն ընդդեմ Թուրքիայի, Յալչիներն ընդդեմ Թուրքիայի*)՝ ընդգծելով, որ պետությունները, ի դեմս իրենց իշխանությունների, պարտավոր են ցուցաբերել առավելագույն հանդուրժողականություն, երբ խոսքն ուղղված է հենց իրենց:

Դատարանը հեղինակի կիրառած «վերացնել» բառի հնարավոր վտանգավոր իմաստը չի ընդունում՝ հիմնավորելով, որ այն պետք է գնահատվի ամբողջ ելույթի համատեքստում, որտեղ այն հնչել է: Ավելին՝ այդ ելույթը եղել է քաղաքական բնույթի, անցկացվել է քաղաքական հավաքի շրջանակում, իսկ խոսքը հնչեցվել է քաղաքական գործչի կողմից՝ ընդդիմադիր դիրքերից:

Դատարանը պարզորոշ նշում է, որ բառերը ելույթի կոնտեքստից կտրված գնահատելը անթույլատրելի է և սխալ իրավական գնահատման կարող է հանգեցնել:

Դատարանը շեշտել է, որ այս մոտեցումը ժողովրդավարության հիմնասյուներից մեկն է և որ քաղաքական խոսքը առավել բարձր պաշտպանություն պետք է ունենա:

Դատարանը գնահատել է խոսքը նաև Ռաբաթի գործողությունների ծրագրով նախատեսված վեցաստիճան թեստի միջոցով: Այս չափանիշների կիրառմամբ դատարանը գնահատում է, որ Հրանտ Բագրատյանի կողմից հնչեցված խոսքը չի համարվում ատելության կամ բռնության կոչ, այլ բաղկացած է քաղաքական դիսկուրսի շրջանակում հնչեցված սադրիչ արտահայտություններից, որոնք չեն գերազանցում պաշտպանված խոսքի սահմանները:

Դատարանը անդրադարձել է նաև ապացույցներին, եզրակացնելով, որ մեղադրանքի կողմը չի կարողացել ներկայացնել բավարար, համակցված, վերաբերելի և թույլատրելի ապացույցներ, որոնք կվերացնեին ողջամիտ կասկածները, մեղադրանքը հիմնվել է ենթադրությունների և գնահատողական դատողությունների վրա, այլ ոչ թե փաստերի, ինչի պայմաններում գործը պետք է լուծվի «in

dubio pro reo» սկզբունքով՝ կասկածները հօգուտ մեղադրյալի:

Այսպիսով, դատարանը կայացրել է արդարացման դատավճիռ:

Դիտարկումներ դատական պրակտիկայի վերաբերյալ

Նախքան նկարագրված դեպքերում դատարանի մեկնաբանությունների վերլուծությանն անցնելը նկատենք, որ դուրս բերված բոլոր դեպքերը ունեցել են քաղաքական համատեքստ և ուղղված են եղել գրեթե բոլորը վարչապետ Նիկոլ Փաշինյանի կամ իր թիմի դեմ: Միայն մի դեպքում, որ խոսքը ուղղված է եղել ակտիվիստների դեմ և հնչել է քաղաքական գործչի կողմից, և կարճվել է պատասխանատվության վաղեմության ժամկետն անցնելու պատճառով: Եվ մեկ այլ դեպքում խոսքը ուղղված է եղել նախկին նախագահներ Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի և նրանց թիմակիցների դեմ. գործի քննության արդյունքում ամբաստանյալը ընդունել է մեղքը և համաձայնության վարույթի միջոցով նրա նկատմամբ որպես պատասխանատվության միջոց նշանակվել է տուգանքը:

Այսպիսով, կարելի է փաստել, որ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքի, բռնության կոչերի, բռնությունը արդարացնելու կամ քարոզելու որևէ դեպք իրավակիրառ մարմինների կողմից չի արձանագրվել կամ առնվազն դատական քննության փուլին չի հասել:

Ինչպես կարելի է նկատել վերը նկարագրված գործերի ուսումնասիրությունից, դատարանի մոտեցումը թե արդարացման և թե մեղադրական ելքով վճիռներում տարբեր հիմնավորումներ ունի: Միևնույն ժամանակ, այս հիմնավորումները ոչ միշտ են պայմանավորված հենց արտահայտություններում կիրառված բառերի իմաստով, դրա վտանգավորությամբ, հեղինակի անձով, լսարանի ծավալով կամ հնարավոր վտանգավոր հետևանքներով: Մեկնաբանությունները առավելապես կապված են իրավակարգավորման ընդհանուր մեկնաբանությունների հետ և հանդիսանում են դատարանի ներքին համոզման վրա հիմնված վերջնական գնահատում:

Նախ և առաջ դիտարկենք մեղավոր ճանաչման ելքով վճիռները: Ակնհայտ տարբերությունները նախ և առաջ կայանում են նրանում, որ շատ դեպքերում դատարանը առհասարակ չի անդրադարձել արտահայտման ազատության սահմաններին, ատելության խոսքի հասկացությանը, մեղադրանքի հիմքում դրված հանցակազմի էությանն ու դրանում կիրառված հասկացություններին. չի մենաբանել, մասնավորապես, թե ինչպես պետք է իրականացվի խոսքի գնահատումը՝ որպես բռնության հրապարակային կոչ, դրա արդարացում կամ քարոզում: Այսպիսի վճիռներում, դատարանը հիմնականում պարզապես նկարագրել է պատժի տեսակի ընտրման մեթոդը, ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքների առկայությունը:

Այս առումով ակնհայտ է, որ հոդվածը միատեսակ կիրառություն չունի. մի պարագայում դատարանը մանրակրկիտ անդրադարձել է միջազգային չափորոշիչներին, մեկնաբանել է արտահայտման ազատության էությունը, սահմանափակման պայմանները, դրա դերը ժողովրդավարական հասարակությունում, անդրադարձել է ատելության խոսքի գնահատման քայլերին, վտանգավորության աստիճաններին, նրա նույնականացմանը:

Միևնույն ժամանակ, դատարանի կողմից արտահայտման ազատության սահմանների նկարագրության և դրանց վերլուծության արդյունքը միշտ չէ, որ նույնն է. մի դեպքում այն հանգեցրել է մեղադրական դատավճռի, մեկ այլ դեպքում՝ արդարացման:

Հատկապես ուշագրավ է մեկնաբանությունը կապված քաղաքական խոսքի պաշտպանվածության հետ: Դատարանը մի քանի դեպքերում հղում է կատարել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներին՝ իրավացիորեն մեջբերելով, որ քաղաքական խոսքը ենթակա է առավել լայն պաշտպանության և որ անգամ սուր քննադատությունները քաղաքական կոնտեքստում պետք է պաշտպանված լինեն արտահայտման ազատությամբ, եթե բռնության կոչեր չեն պարունակում: Այս մեկնաբանությունը հիմք է հանդիսացել արդարացման դատավճիռների այնպիսի դեպքերում, որտեղ խոսքի հեղինակները քաղաքական կամ հասարակական գործիչներ են, ինչպես օրինակ նախկին վարչապետ և նախկին պատգամավոր Հրանտ Բագրատյանի դեմ հարուցված գործի պարագայում կամ հասարակական գործիչ Նարեկ Մալյանի պարագայում: Այսինքն, այս դեպքերում դատարանը եղրակացրել է, որ քաղաքական ենթատեքստում այս անձանց կողմից հնչեցված խոսքը իրական վտանգ չի պարունակում և կարող է մեկնաբանվել որպես սուր քաղաքական քննադատություն:

Այս դիրքորոշումը ենթադրում է հետևյալը՝

- Քաղաքական խոսքը՝ հատկապես ընդդիմադիր գործչի խոսքը, առանձին զգայուն և պաշտպանված ոլորտ է:
- Քննչական և դատախազական մարմինները պարտավոր են առանձնահատուկ մանրա-կրկիտ և համակողմանի վերլուծել՝ արդյոք խոսքը պարզապես իշխանություններին վիրավորելու, քննադատելու (թույլատրելի) ձև է, թե իրական բռնություն, ատելություն հրահրող (արգելված) խոսք:
- Պետությունն ունի «զսպվածության պարտավորություն»՝ ազատ խոսքի դեմ քրեական գործեր հարուցելիս:
- Եթե խոսքը սադրիչ է, վիրավորական կամ անհանգստացնող, բայց չի հրահրում բռնություն կամ ատելություն, այն չի կարող քրեական պատասխանատվության հիմք լինել:

Նույն պարագայում, 21-րդ համարի ներքո նկարագրված գործը, որտեղ ամբաստանյալը փաստաբան Մուշեղ Շուշանյանն է, դատարանը քաղաքական խոսքի պաշտպանության սկզբունքը մեկնաբանել է այնպես, որ արտահայտման ազատությունը առավել լայն պաշտպանություն է նախատեսում քաղաքական գործիչների կողմից հնչեցված խոսքի համար: Այսպես, դատարանը, վերլուծելով օրենսդրական կարգավորումները, փորձել է պարզել, թե ովքեր են համարվում քաղաքական գործիչ՝ հիմնավորելով, որ փաստաբան Մուշեղ Շուշանյանը քաղաքական գործիչ չէ և հետևաբար իր հեղինակած խոսքը պաշտպանված չէ արտահայտման ազատությամբ և պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության: Դատարանը, այսինքն քաղաքական քննադատության պաշտապնվածությունը մեկնաբանել է ոչ թե որպես քաղաքական խոսքի և քաղաքական գործիչներին ուղղված քննադատության պաշտպանություն, այլ հենց քաղաքական գործիչների կողմից հնչած խոսքի պաշտպանություն:

Այս մեկնաբանությունը կարող է բավականին վտանգավոր նախադեպ ձևավորել՝ հիմնված այն շփոթության վրա, թե արտահայտման ազատությունը առավել լայն պաշտպանություն է նախատեսում քաղաքական գործիչների համար: Ըստ էության այստեղ խոսքը վերաբերում է քաղաքական գործիչների հասցեին հնչած քաղաքական բնույթ ունեցող քննադատական խոսքի մասին, որը երբեմն կարող է շատ սուր լինել:

Շարունակելով արդարացման դատավճիռների տրամաբանությունը, անհնար է չնկատել, որ գրեթե բոլոր դեպքերում արդարացվել են քաղաքական կամ հասարակական գործիչները:

Այսպիսով, անդրադառնալով այս բաժնում առաջ բերված հարցադրումներին, հնարավոր է

եզրակացնել, որ չնայած նրան, որ քննարկվող իրավակարգավորման ձևակերպումները հստակ սահմանումներ չունեն և կարող են տարընթերցման տեղիք տալ, դատարանները որոշ դեպքերում կարողանում են արդյունավետ կերպով հենվել միջազգային մարմինների մեկնաբանությունների և ընդունած չափորոշիչների վրա՝ դուրս բերելու համար կարգավորման էությունը և սահմանները:

Իհարկե, ոչ բոլոր դատավորների պարագայում է, որ մարդու իրավունքներին վերաբերող միջազգային մարմինների մեկնաբանությունները արդյունավետորեն կիրառվում են և հիմք են ծառայում օրենքի մեկնաբանության համար: Այս իրավիճակը պետք է նկատի ունենալ դատավորների վերապատրաստման ծրագրերը մշակելիս: Այնուամենայնիվ, ինչպես նշվեց, անգամ նույն մեկնաբանությունների դիտարկման պարագայում դատավորները նույնական եզրակացության չեն հանգել:

Ի վերջո ակնհայտ է նաև, որ որևէ փոքրամասնության կամ խոցելի խմբի շահերի պաշտպանության նպատակով ատելության խոսքի այս կարգավորումը չի կիրառվել:

ԼԳԲՏ+ ԱՆՁԱՆՑ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՂ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Նախքան արձանագրված իրավիճակին անդրադառնալը, ներկայացնենք 2018 թ.-ից իշխանությունը ստանձնած ՀՀ վարչապետի նախնական հրապարակային դիրքորոշումից մի հատված:

Դեռևս 2018 թ.-ի հեղափոխությունից ամիսներ անց վարչապետ Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ տարածված թշնամական վերաբերմունքին, հրապարակավ արտահայտել է հետևյալ կարծիքը.

«Մենք ընդունում ենք, որ Հայաստանում, և աշխարհի ցանկացած երկրում, կան մարդիկ ովքեր ունեն ոչ ավանդական սեռական կողմնորոշում, եթե կան այդ մարդիկ, մենք ինչ ենք անում այդ մարդկանց, ինչ վերաբերմունք ենք ցույց տալիս, սովետական միության ժամանակ պարզ էր ամեն ինչ, քրեական օրենսգրքում գրված էր հոդված, եթե պարզվում էր, որ մարդն այդպիսին էր, տանում էին բանտ էին նստացնում, դրանից էլ կախաղան էին հանում, գնդակահարում էին: Ես անկեղծ ասեմ, ինձ համար որպես վարչապետ, և մեր կառավարության համար այդ թեման որքան քիչ բարձրանա, այնքան լավ, քանի որ դա գլխացավանք է, քանի որ կեսը կասեն սրանք դրանց պաշտպանն են, կեսը կասեն իրավունքների խախտող են, մյուս կեսն էլ կասի խարխլում են մեր ավանդական ընտանիքի հիմքերը:

Եկեք որոշենք, մենք այդ մարդկանց բոլորին հավաքում ենք Հայաստանից դու՞րս ենք անում, քրեական օրենսգրքում հոդված ենք ավելացնու՞մ, իրենց գոյությունն ընդունու՞մ ենք, թե ասում ենք քարոզչություն մի տարեք: Սա շատ լուրջ հարց է, ես մտածում եմ, որ մեր կառավարությունը ինչ-որ ձևով այս հարցից կխուսափի, բայց, չգիտեմ, 10, 20 թե 30 տարի հետո անխուսափելիորեն լինելու է մի կառավարություն, որ առերեսվելու է այս պրոբլեմի հետ ու այդ օրը այդ կառավարությունը պետք է որոշում կայացնի՝ ինքը տանկերը հանում է, բոլորին տրորում է, գնդակահարում է, թե ինքը ճանաչում է այդ մարդկանց գոյությունը Հայաստանում, որը ցանկացած պետության մեջ տոկոս կա ու մենք պետք է սա հաշվի առնենք»:[35]

ՀՀ վարչապետը, փաստորեն իր ելույթում, փաստացի արտահայտել է դիրքորոշում առ այն, որ հասարակության մի ամբողջ խմբի, այն է՝ ԼԳԲՏ+ անձանց ճակատագիրը պետք է որոշեն կառավարությունը և ազգային ժողովը: Նա, մասնավորապես, բառացիոն նշել է, որ իրենք կարող են որոշել այրել, բանտարկել, թե ինչպես վարվել սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ տարբերվող անձանց հետ: Սա կարող է իհարկե գնահատվել որպես պոպուլիստական արտահայտություն մի ղեկավարի կողմից, որի երկրի բնակչության 95 տոկոսը բացասաբար են տրամադրված ԼԳԲՏ+ անձան նկատմամբ, որոնց հաճոյանալու նպատակով նա կարող է խոստանալ ցանկացած միջոցով լուծել ԼԳԲՏ+ անձանց գոյության խնդիրը:

Այս պարագայում, հարց է ծագում, թե ուր մնացին Սահմանադրությունը և սահմանադրական այն դրույթը, համաձայն որի՝ պետությունը սահմանափակված է մարդու հիմնարար իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Եվ ի վերջո ինչպես պետք է ԼԳԲՏ+ անձինք ապահով ապրեն այսպիսի պայմաններում:

***

35 ԼԳԲՏ-ի հետ կապված պետք է որոշում կայացնել օրենսդրական մակարդակով. Փաշինյան, 24.10.2018 թ. https://www.panorama.am/am/news/2018/10/24/%D5%86%D5%AB%D5%AF%D5%B8%D5%AC-%D5%93%D5%A1%D5%B7%D5%AB%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6/2023211

2019-ին «Փինք»-ի կողմից իրականացվող մոնիթորինգի արդյունքների համաձայն ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ատելության խոսքը հասել է աննախադեպ մակարդակի:[36] Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ատելության խոսք են տարածել ոչ միայն մասնավոր անձինք, այլև պետական պաշտոնյաներ, որոնց հայտարարությունները լայնորեն լուսաբանվել են լրատվամիջոցներով:

Որոշ պատգամավորներ առաջարկել են խտրական բնույթ ունեցող օրենսդրական փոփոխություններ, որոնք կարող են խախտել ԼԳԲՏ+ անձանց իրավունքները: Թեև դրանք մերժվել են իշխող կուսակցության կողմից, քննարկումները ուղեկցվել են վիրավորական և թշնամանք սերմանող արտահայտություններով, ներառյալ՝ բռնության կոչեր, որոնց իրավական գնահատական չի տրվել: Սա, մասնավորապես, այս շրջանում էր, երբ տեղի էր ունեցել իշխանափոխություն և դեռևս պաշտոններ զբաղեցնող նախկին իշխանությունների ներկայացուցիչները փորձում էին ամեն կերպ վարկաբեկել նոր իշխանություններին, իսկ վարկաբեկման համար հիմք էր ծառայում նրանց՝ ԼԳԲՏ+ համայնքի հետ կապելը:

Լրատվամիջոցներով և բողոքի ակցիաների ընթացքում որոշ խմբեր տարածել են կեղծ տեղեկություններ՝ ԼԳԲՏ+ համայնքը ներկայացնելով որպես պետական աջակցություն ստացող ծրագրերի մասնակից: Ակցիաներում հնչել են բռնության և խտրականության կոչեր, մասնակցել են զինված անձինք, սակայն իրավապահները չեն միջամտել դրանք դադարեցնելու համար: Ստամբուլյան կոնվենցիայի դեմ ստորագրահավաքի ընթացքում կազմակերպիչները ագրեսիվ վարք են դրսևորել անցորդների նկատմամբ:

Այնուամենայնիվ, պետությունը սկսել է քայլեր ձեռնարկել՝ մերժելով մարդու իրավունքներին հակասող նախաձեռնությունները և մշակելով ատելության խոսքի կանխմանն ուղղված համակարգային փոփոխություններ:

***

2020 թվականին թեև Քրեական օրենսգիրքը լրացվել է ատելության խոսքի դեմ պայքարի նոր հոդվածով, սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով բռնության կոչերի դեպքերը մնացել են անպատիժ՝ առանց պատշաճ իրավական գնահատականի:[37]

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը սկսեց լայնածավալ ռազմական գործողություններ Լեռնային Ղարաբաղում և դրա հարակից շրջաններում՝ ամբողջ շփման գծի երկայնքով: Պատերազմը ծանր ընթացավ. Հայաստանի և Արցախի ժողովուրդը դիմակայում էր ադրբեջանա-թուրքական մեծ ուժի: Բոլոր հնարավոր ռեսուրսները կենտրոնացված էին պատերազմի վարման և դրա հետևանքների հաղթահարման վրա:

Բացի պարտադիր և կամավոր զինվորագրումներից, բնակչությունը ներգրավված էր բազմաբնույթ կամավորական նախաձեռնություններում՝ աջակցություն տրամադրելով պատերազմի հետևանքով տուժածներին և մասնակիցներին՝ սոցիալական և այլ անհրաժեշտ օգնության տեսքով: Հայաստանի և Արցախի բնակիչները, այդ թվում ԼԳԲՏ+ անձինք, մասնակցում էին թե՛ մարտական գործողություններին, թե՛ կամավորական աշխատանքներին:

Սակայն նույնիսկ այս ծանր ժամանակաշրջանում, երբ պետության ազգային անվտանգությունն ու բնակչության կյանքը վտանգի տակ էին, շարունակվում էր ԼԳԲՏ+ անձանց թիրախավորումն ու նրանց նկատմամբ ատելության քարոզը:

36 «Փինք» ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում տարեկան զեկույց 2019 թ. https://pinkarmenia.org/wp-content/uploads/2024/02/lgbtreport2019hy.pdf
37 «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի 2020 թ.-ի տարեկան զեկույց. «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում», բաժին 2. https://pinkarmenia.org/wp-content/uploads/2024/02/lgbt-report-2020-hy.pdf

Համացանցում տարածվել են ծաղրանկարներ ու նյութեր, որտեղ նույնասեռական և տրանս անձինք ներկայացվում են նվաստացուցիչ կերպով: Օրինակ՝ քաղաքական գործիչներին դիտավորյալ պատկերել են որպես նույնասեռականներ՝ ծաղրի կամ վիրավորանքի նպատակով: Նման օրինակներից մեկն այն նկարն է, որտեղ Նիկոլ Փաշինյանը պատկերված է ծիածանագույն շապիկով:

Բացի այդ, ստեղծվել է անիմացիոն տեսանյութ, որտեղ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևն ու Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ներկայացված են որպես նույնասեռական զույգ՝ նրանց նվաստացնելու նպատակով, ինչի արդյունքում նույնասեռականությունը դիտարկվել է որպես վիրավորական ու նվաստացուցիչ բան:

Նշվում է նաև, որ նման հրապարակումներում հաճախ շեշտվում էր միջազգային հանրության ուշադրությունը հրավիրելու նպատակն: Սակայն, քանի որ միջազգային կազմակերպությունները չձեռնարկեցին բավարար քայլեր Ադրբեջանի զինված ուժերի կողմից խաղաղ բնակչության, քաղաքացիական ենթակառուցվածքների, փրկարար ծառայությունների, հոսպիտալների և մշակութային ժառանգության վրա ուղղակի հարձակումների կանխման համար, նմանատիպ նյութերը կարող էին լայն լսարանի համար համոզիչ թվալ ու դրական արձագանք գտնել, ինչն էլ իր հերթին խթանում էր ԼԳԲՏ+ անձանց դեմ առկա բացասական վերաբերմունքը: Նման ատելության խոսքի հեղինակների թվում եղել է նաև ընդդիմադիր կուսակցությունից ԱԺ պատգամավոր:

***

2021-ին ԼԳԲՏ+ անձանց դեմ ատելության խոսքը շարունակվել է հատկապես սոցիալական մեդիայում:[38] Շուռնուխ գյուղի հետ կապված քաղաքական մանիպուլյացիաները նպատակ ունեին ԼԳԲՏ+ համայնքը բացասական լույսի տակ ներկայացնել և Նիկոլ Փաշինյանին վարկաբեկել: Մասնավորապես, այն համատեքստում, որ Ադրբեջանի կողմից Շունուխ գյուղից որոշակի հատված էր գրավվել, իսկ Հայաստանում ընթանում էր 2018 թ.-ին նույն գյուղի բնակիչների կողմից ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ բռնության դեպքի քննությունը, փորձ էր արվում նսեմացնել քրեական գործի իմաստը և շահարկել արտաքին թշնամուց պաշտպանության կամքի բացակայությունը:

Օրինակ, «Spitak Arch» մականունով օգտատերը կեղծ տեղեկություն էր տարածել, թե «Փինք» ՀԿ-ն պետական միջոցներով ֆինանսավորվել է՝ պատերազմի պարտության պատճառաբանմամբ, ուղեկցելով հրապարակումը կազմակերպության աշխատակիցների լուսանկարներով ու բռնության կոչերով: Չնայած գրավոր հաղորդումներին, իրավապահները գործ չեն հարուցել՝ դա գնահատելով որպես արտահայտման ազատության դրսևորում:

ԼԳԲՏ+ թեման նաև օգտագործվել է հանրային գործիչներին վարկաբեկելու համար՝ նրանց նույնացնելով ԼԳԲՏ+ համայնքի հետ և օգտագործելով վիրավորական արտահայտություններ: Թիրախավորվել են Ալեն Սիմոնյանը, Նիկոլ Փաշինյանը, Արման Բաբաջանյանը, Վահե Գրիգորյանը, Լարա Ահարոնյանը:

Նախընտրական շրջանում ընդդիմադիր խմբերը շահարկել են ԼԳԲՏ+ թեման՝ իշխանությանը վարկաբեկելու նպատակով, օրինակ՝ ներկայացնելով, թե իշխանությանը աջակցելը նույնն է, ինչ ԼԳԲՏ+ համայնքին աջակցելը:

Չնայած օրենսդրական առաջընթացին, իրավապահ մարմինները արդյունավետ չեն կիրառել օրենքը՝ բռնության կոչերը և ատելության խոսքը չքննելով կամ հրաժարվելով գործեր հարուցել: Ատելության խոսքը տարածվել է թե սովորական քաղաքացիների, թե հանրային գործիչների կողմից՝ վտանգավոր չափով ազդելով հանրային ընկալումների վրա և խորացնելով հոմոֆոբիան ու անհանդուրժողականությունը:

38 «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի 2021 թ.-ի տարեկան զեկույց. «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում». https://pinkarmenia.org/wp-content/uploads/2024/02/lgbtreport2021_hy.pdf

***

2022 թ.-ին կրկին ԼԳԲՏ+ անձանց թիրախավորումն ու նրանց դեմ ատելության խոսքը Հայաստանում հաճախ օգտագործվել է քաղաքական մանիպուլյացիայի գործիք՝ իշխանության և ընդդիմության միջև պայքարում:[39]

Ներկայացվում են որոշ օրինակներ՝ առավել պարզ դարձնելու համար շահարկումների բնույթը:

Նախագահի թեկնածու լինելու մասին լուրերի ընթացքում ընդդիմադիր շրջանակներ փորձեցին իշխանությանը կապել ԼԳԲՏ +համայնքի հետ: Արայիկ Հարությունյանի նախարար եղած ժամանակ հայտնի տրանսգենդեր անձի հետ հանդիպման լուսանկարը դարձավ շահարկումների պատճառ: Նաիրա Զոհրաբյանը ևս այդ թեման բարձրաձայնեց՝ փորձելով վարկաբեկել նրան:

ՄԻՊ Քրիստինե Գրիգորյանի հայտարարությունը՝ ԼԳԲՏ+ անձանց իրավունքները պաշտպանելու պատրաստակամության մասին, ընդդիմադիր շրջանակներում դարձավ հարձակման առիթ: Գրիգորյանին մեղադրում էին «միայն ԼԳԲՏ խնդիրներով զբաղվելու» մեջ, անտեսելով մյուս սոցիալական խնդիրները:

Փաստաբան Արա Զոհրաբյանը պնդել է, թե 2018-ից հետո Հայաստանում աճել է նույնասեռական և տրանսգենդեր անձանց թիվը՝ նշելով չափազանցված և հիմնազուրկ տոկոսներ: Այդ հայտարարությունները լայնորեն տարածվել են նաև մեդիայում՝ փորձելով ցույց տալ, թե գործող իշխանությունը խրախուսում է «այլասերվածություն»:

Որոշ ընդդիմադիր հասարակական գործիչներ, ինչպես օրինակ՝ գրականագետ Սերժ Սրապիոնյանը, իշխանություններին մեղադրել են «ազգային արժեքները պղծելու» մեջ, պնդելով, թե պլանավորվում է սեռափոխության և նույնասեռ ամուսնության օրինականացում:

Որոշ լրատվական կայքեր հրապարակել է նյութեր, որտեղ ներկայացվում է, թե իշխանությունը պատրաստվում է արտոնություններ տալ տրանսգենդեր և նույնասեռական անձանց, այդ թվում անվճար սեռափոխության վիրահատություններ:

ԼԳԲՏ+ միջոցառման մասին ԱՄՆ դեսպանության գրառումը դարձավ նոր մեղադրանքների պատճառ՝ իշխանությանը ԼԳԲՏ+ իրավունքների պաշտպանությամբ «ապազգային» ներկայացնելու համար: Սակայն նմանատիպ շահարկումներ արվել են նաև իշխանամերձ շրջանակներում՝ ընդդիմությանը նույն մեղադրանքով քննադատելով ԱՄՆ դեսպանատան հետ հանդիպման համար:

Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով վճիռը ևս դարձավ ատելության խոսքի առիթ. ՄԻԵԴ-ի կողմից տուժողի իրավունքների խախտման ճանաչումը նույնպես դարձավ ատելության խոսքի առիթ: Զոհին կրկին վիրավորանքներ հասցվեցին:

Օմբուդսմեն Քրիստինե Գրիգորյանի մասնակցությունը «Իրավունքի կողմ» ՀԿ-ի նոր գրասենյակի բացմանը դարձավ լրացուցիչ թիրախավորում լրատվամիջոցներում՝ այն ներկայացնելով որպես ԼԳԲՏ համայնքի համար հատուկ տարածք ստեղծելու քաղաքականություն:

Ատելության խոսքի նոր առիթ հանդիսացավ երկու երիտասարդների ինքնասպանության դեպքը. Համացանցում տարածվեցին բռնությունն արդարացնող կոչեր և ապատեղեկատվություն՝ ողբերգությունը դարձնելով հոմոֆոբ քարոզչության թեմա:

Այսպիսով, թե՛ իշխանությունը, թե՛ ընդդիմությունը ԼԳԲՏ+ թեման օգտագործում են միմյանց վարկաբեկելու համար՝ ձևավորելով թշնամական վերաբերմունք ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ և

39 «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի 2022 թ.-ի տարեկան զեկույց. «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում», բաժին 2. https://pinkarmenia.org/wp-content/uploads/2024/02/lgbtreport2022hy.pdf

անտեսելով նրանց իրավունքների պաշտպանությունը:

***

2023 թ.-ի ընթացքում ևս արձանագրված դեպքերից որևէ մեկի առթիվ քրեական գործ չի հարուցվել: Քաղաքական շահարկումները շարունակվել են:[40]

Այսպես. Լրատվամիջոցներում հայտնվել են իրականությունը խեղաթյուրող ու մանիպուլյատիվ տեղեկություններ, որոնք փորձում են օգտագործել հասարակությունում առկա վախերն ու կարծրատիպերը՝ իշխանություններին վերագրելով գործողություններ, ինչպիսիք են «այլասերման տարածումը», հայկական արժեքների և ավանդական ընտանիքի քայքայումը, մանկապղծության քարոզը և նմանատիպ մեղադրանքներ: Այսպիսի գործիքները մի կողմից իշխանություններին վարկաբեկելու, մյուս կողմից ԼԳԲՏ+ անձանց դեմ ատելություն հրահրելու նպատակ ունեն: ԼԳԲՏ+ անձինք ներկայացվում են որպես բացասական ու «այլասերված» երևույթ՝ կապելով նրանց մանկապղծության և «աստվածաշնչյան մեղքերի» հետ:

Հասարակության այն հատվածում, որը չունի բավարար տեղեկացվածություն սեռականության, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին և դրանից ելնելով՝ ունի վախեր, նման շահարկումները հեշտությամբ ընդունվում են որպես ճշմարտություն՝ սրելով բացասական և ագրեսիվ վերաբերմունքը:

Նմանատիպ նյութերում կրկին շահարկվում է Ստամբուլյան կոնվենցիայի («Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին») և Լանզարոտեի կոնվենցիայի («Երեխաներին սեռական բռնությունից և սեռական ոտնձգությունից պաշտպանելու մասին») վավերացման թեման՝ դրանք ներկայացնելով որպես «սատանայական», «պղծություն» ու «այլասերում» սերմանող փաստաթղթեր: Կոնվենցիաների վավերացումը ներկայացվում է որպես նույնասեռականության «պրոպագանդա» և «սոդոմականություն»:

Հայաստանի հանրապետական կուսակցությունը, որը իշխում էր մինչև 2018 թվականի հեղափոխությունը և որի անդամները նախկինում աչքի էին ընկնում ԼԳԲՏ+ անձանց դեմ ատելության խոսքով, տարածել է հրապարակում՝ ընդգծելով իրենց և Նիկոլ Փաշինյանի տարբերությունները: Մասնավորապես նշվել է.

«Մեր կարծիքով տրանսգենդեռ ու միասեռական լինելը մեր ազգի արժեքներին դեմ է, նրանց կարծիքով՝ այնքան ընդունելի է, որ ԱԺ ամբիոն են տրամադրում ու ֆիլմ նկարում» (Նկատի է ունեցվում «Իրավունքի կողմ» ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանի՝ ԱԺ-ում հանրային լսումների ընթացքում ունեցած ելույթը և տարածված տեղեկություններն առ այն, թե Մշակույթի նախարարության կողմից ֆինանսավորվել է ծանրամարտի Եվրոպայի չեմպիոն Մել Դալուզյանի մասին պատմող ֆիլմ):

Այսպիսով, անգամ նույնասեռական կամ տրանսգենդեր անձանց որևէ հարթակ տրամադրելը ներկայացվում է որպես բացասական երևույթ:

Նույնասեռականության հետ կապելով թիրախավորվել է նաև ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը: Հրապարակման մեջ օգտագործվել են հայ-հոյախառն և վիրավորական արտահայտություններ, կրկին նույնասեռականությունը ներկայաց-նելով որպես բացասական երևույթ:

Տարածվել են նաև կեղծ լուրեր այն մասին, թե երեխաների սեռը այսուհետ կարող է նշվել որպես «չճշտված»: Այդ տեղեկության հիմնական հեղինակն էր Փաստաբանների պալատի նախկին

40 «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի 2023 թ.-ի տարեկան զեկույց. «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում». https://pinkarmenia.org/wp-content/uploads/2024/05/lgbtreport2023hy.pdf

նախագահ Արա Զոհրաբյանը, իսկ լուրը լայնորեն տարածվել է լրատվամիջոցներում: Սովորաբար ավելի արագ և մեծ տարածում է գտնում հենց «սենսացիոն բացահայտումը», քան դրա կեղծ լինելը բացատրող հետագա պարզաբանումները:

2023 թ.-ի օգոստոսին տրանսգենդեր անձի սպանությունից հետո հասարակությունում բռնկվեց ատելության ալիք: Սոցիալական ցանցերում և լրատվամիջոցների մեկնաբանություններում մարդիկ սկսեցին արդարացնել սպանությունը, վիրավորել զոհին և ԼԳԲՏ+ համայնքի նկատմամբ հետագա բռնությունների կոչեր անել: Ահա դրանցից մի քանի բնորոշ օրինակներ, որոնք արտահայտում են այդ խոսքի հիմնական իմաստը.

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը անդրադարձել է տրանսգենդեր անձի սպանությունից հետո տարածված ատելության խոսքին՝ իր մտահոգությունը հայտնելով, ինչից հետո հենց ինքն է դարձել ատելության խոսքի թիրախ:

Մեկնաբանություններում հնչել է նաև ատելության խոսք սպանված անձի մոր հասցեին (զեկույցում դա չի ներառվել հայհոյախառն լինելու պատճառով): Սա ծանր հոգեբանական ճնշում է տուժողի մոր նկատմամբ, ով արդեն կորցրել է իր երեխային:

17-ամյա երիտասարդի ինքնասպանության դեպքը, որը պետք է մտահոգություն հարուցեր հասարակության շրջանում, դարձել է նոր ատելության ալիքի առիթ: Հասարակ քաղաքացիները, որոնք չունեն քաղաքական շահ, բայց արտահայտում են իրենց անձնական կարծիքները, այն աստիճանի են ներշնչված այս մթնոլորտով, որ չեն գիտակցում հոմոֆոբիայի վտանգավոր հետևանքը մարդկային կյանքի համար:

Ինքնասպանության մասին նյութերի մեկնաբանություններում բազմաթիվ են ատելությամբ լցված խոսքեր, նույնիսկ ուղղակի կոչեր ԼԳԲՏ+ անձանց ինքնասպանության:

***

2024 թվականին նույնպես շարունակվել է ԼԳԲՏ+ թեմայի շահարկումը թե ընդդիմության, թե իշխանության կողմից՝ որպես քաղաքական մանիպուլյացիայի գործիք:[41]

Սահմանադրության փոփոխության շուրջ քննարկումները, որոնք առնչություն չունեին մարդու իրավունքների և ԼԳԲՏ+ անձանց հետ, որոշ շրջանակներ օգտագործեցին նույնասեռական ամուսնությունների թեման կրկին առաջ բերելու համար: Այսպիսի հայտարարությունները նպատակ ունեին խթանել հանրային դժգոհությունը և կանխել փոփոխությունների օրակարգը:

Օրինակ, Հայկ Նահապետյանը հայտարարել է, թե նոր Սահմանադրությամբ «ջնջվելու է Արցախը» և «օրինականացվելու է ԼԳԲՏ համայնքը», չնայած «օրինականացնել» բառը այստեղ իմաստ չունի, քանի որ ԼԳԲՏ անձինք արդեն իսկ իրավահավասար քաղաքացիներ են:

Դաշնակցության անդամ Արծվիկ Մինասյանը նույնպես հայտարարել է, թե Սահմանադրական փոփոխություններով ցանկանում են հանել նույնասեռական ամուսնությունների արգելքը՝ շարունակելով տարիներ առաջ սկսած թշնամանք սերմանող հռետորաբանությունը: Մինասյանը, հիշեցնենք, 2012-ին արդարացրել էր Դի-Այ-Ուայ ակումբի պայթեցումը, որի վերաբերյալ ՄԻԵԴ-ն 2022-ին արձանագրել էր ատելության խոսք և պարտավորեցրել պետությանը պաշտպանել ԼԳԲՏ+ անձանց:

Այսօր էլ նրա նման հայտարարությունները վկայում են պետության թերի արձագանքի մասին. պետությունը ոչ միայն չի դատապարտել նման ատելության խոսքը, այլև չի կատարել ՄԻԵԴ-ի

41 «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի 2024 թ.-ի տարեկան զեկույց. «ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում». https://pinkarmenia.org/wp-content/uploads/2025/05/lgbtreport2024hy.pdf

պահանջը օրենսդրությունը համապատասխանեցնելու վերաբերյալ:

Ատելության խոսքը չի սահմանափակվել միայն ընդդիմադիր քաղաքական գործիչներով: Իշխող ուժն էլ հաճախ կիրառել է նույն մեթոդը: Որպես օրինակ, սոցիալական ցանցերում տարածվել են նյութեր, որոնք Գարեգին Բ-ին և հոգևոր առաջնորդներին փորձում են կապել ԼԳԲՏ+ համայնքի հետ՝ արժանանալով նմանատիպ մանիպուլյացիաների:

2024-ին Հայաստանը «Միս Սթար Ինթերնեյշնլ» մրցույթում ներկայացրել է տրանսգենդեր կին Դիանա Ղզրոյանը: Այս փաստը լայն քննադատության և ատելության ալիք բարձրացրեց սոցիալական ցանցերում:

Քաղաքացիների որոշ հատված այն որակեց «անհամապատասխան մեր ազգային արժեքներին», օգտագործվեցին վիրավորական արտահայտություններ և բռնության կոչեր: «Իրավունքի կողմ» կազմակերպությունը հայտնել է իրավապահներին սպանության և բռնության հրապարակային կոչերի մասին:

Ատելության խոսքը լուրջ հետևանքներ է ունենում ոչ միայն թիրախավորված անձի համար՝ առաջացնելով վախ և սոցիալական մեկուսացում, այլ նաև ամբողջ համայնքի, քանի որ նրա բոլոր անդամներն ունենում են վտանգված զգալու հիմք:

Սոցիալական ցանցերում տարածված կոչերից մի քանիսը բացահայտ բռնության կոչեր են, օրինակ՝ «Եկել է սրանց վերջ տալու ժամանակը», «թասիբով տղա չկա, որ փորը թափի», «պետք է վառել» և այլն:

Տարվա վերջին իշխող ուժի ներսում ներքին լարվածության ֆոնին մամուլում տարածվեցին լուրեր, թե պատգամավոր Հովիկ Աղազարյանի հեռախոսում հայտնաբերվել են նույնասեռ կապերի վերաբերյալ նամակագրություններ: Այս տեղեկատվությունը, անկախ նրա իսկության հարցից, օգտագործվեց որպես քաղաքական ճնշման միջոց՝ նրան հրաժարական պարտադրելու նպատակով:

Խնդրահարույց է թե անձնական տվյալների արտահոսքը, թե այն հանգամանքը, որ նույնասեռական հարաբերությունները փորձ են արվում ներկայացնել որպես ամոթալի բան՝ լծակ դարձնելով քաղաքական հակառակորդի դեմ:

Իշխանությունը այս կերպ ցույց տվեց, որ ոչ միայն չի պաշտպանում անձնական տվյալների գաղտնիությունը, այլ նաև պատրաստ է շահարկել ԼԳԲՏ+ թեման հանրային բացասական վերաբերմունքը օգտագործելով՝ քաղաքական հակառակորդին վարկաբեկելու համար:

***

2025 թվականի մարտի 30-ին Գյումրիում որպես քաղաքապետի թեկնածու առաջադրված Վարդան Ղուկասյանը առցանց հեռարձակվող մամուլի ասուլիսի ընթացքում՝ բազմաթիվ լրագրողների ներկայությամբ, արել է հետևյալ հայտարարությունը. «Եթե դուք էլ եք զզվում ԼԳՏՊ-ից, եկեք, կանգնեք իմ կողքը, տեսնեք, թե ես ինչ կբերեմ ԼԳՏՊ-ի գլխին: Ու մի բան էլ եմ ասում. եթե հայոց եկեղեցին հանկարծ մի հատ եվրոպացիների պես միասեռականներին ամուսնություն անի, ես բարձրաձայն ասում եմ. ուրեմն եկեղեցու մեջ կգնդակահարեմ էդ քահանային»:[42]

Այնուամենայնիվ, չնայած նրան, որ այս դեպքի առնչությամբ ներկայացվել է հաղորդում հանցագործության մասին երեք տարբեր կազմակերպությունների կողմից, քննչական մարմինը կայացրել է որոշում առ այն, որ այս խոսքը բռնության կոչ քամ քարոզ չի պարունակում:

42 Եկեղեցու մեջ կգնդակահարեմ այդ քահանային. բարձրաձայն ասում եմ. Վարդան Ղուկասյանը ԼԳԲՏ քարոզչության մասին. 31.03.2025 թ., https://armtimes.com/hy/article/310901

ԼԳԲՏ+ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Չնայած այն հանգամանքին, որ 2020-ից բռնության հրապարակային կոչերն ու արդարացումը քրեականացված են, իրավապահ մարմինները անգամ վարույթ չնախաձեռնեցին՝ նման զանգվածային կոչերը ուսումնասիրելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու համար:

Բռնության կոչերի և դրանց արդարացման դեմ պայքարը պետության առաջնային պարտականություններից է՝ ատելության հողի վրա հանցագործությունները կանխելու և խոցելի խմբերի պաշտպանությունն ապահովելու համար: Անգործություն ցուցաբերելով պետությունը փոխանցում է հետևյալ ուղերձները. նախ՝ որ նման վարքագիծն ընդունելի է, և երկրորդ՝ որ նման դեպքերում հանցագործները կմնան անպատիժ:

Խոսքի վտանգավորությունը գնահատելիս ինչպես նշվեց կարևոր է նաև այսպես կոչված «վեցաստիճան թեստի» կիրառումը: Քանի որ բռնության կոչերն ու արդարացումը տեղի են ունեցել կոնկրետ սպանության համատեքստում, լսարանի համար հստակ է, որ նման հանցագործությունները հասարակության կողմից արդարացվում են ու խրախուսվում, իսկ պետությունը չի արձագանքում:

Հեղինակների մեծ մասը շարքային քաղաքացիներ են, սակայն որոշ դեպքերում հեղինակներն ունեն ազդեցիկ դիրք: Օրինակ, դրանցից մեկի հեղինակը պատգամավոր է, Երևանի ավագանու անդամ է կամ հասարակական գործիչ, ինչը նրա խոսքին ավելի մեծ ծանրություն և ազդեցություն է տալիս:

ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ բռնության արդարացման արտահայտությունները ունեն հետևյալ ուղերձը. ԼԳԲՏ+ անձանց հետ հենց այդպես էլ պետք է վարվել: Սա սպառնալիք է ամբողջ համայնքի համար և խախտում է նրանց հոգեկան ամբողջականությունը:

Նման խոսքի զանգվածային բնույթը և պարբերականությունը մեծացնում են դրա վտանգավորությունը՝ ոչ միայն հեղինակների անհատական ազդեցության, այլ նաև այդ կարծիքների ժողովրդականության պատճառով:

Վերլուծելով բռնության և խտրականության այլ դեպքերի հաճախականությունը հոմոֆոբ հասարակությունում, կարելի է եզրակացնել, որ նման խոսքը խթանում է հետագա բռնությունները:

Արդյունքում՝ Եվրոպայի խորհրդի չափորոշիչներով և վեցաստիճան թեստով հնարավոր է գնահատել, թե նման մեկնաբանությունների հեղինակները ինչ պատասխանատվության պետք է ենթարկվեն: Իսկ մնացած վիրավորական և հայհոյախառն անհանդուրժող խոսքը պետք է քննադատվի և դատապարտվի պետական մակարդակով՝ որպես անընդունելի պրակտիկա ժողովրդավար պետությունում:

Վեցաստիճան գնահատման մեթոդով ակնհայտ է, որ այսպիսի ատելության խոսքը տարածվել է չափազանց զգայուն համատեքստում՝ անչափահասի կյանքի իրավունքի խախտման դեպքի շուրջ: Այս դեպքն ազդել է ոչ միայն զոհի ընտանիքի և մերձավորների վրա, այլ նաև ամբողջ ԼԳԲՏ+ համայնքի վրա:

Ատելության խոսքը խորացնում է համայնքի հոգեբանական ճնշվածությունը և խրախուսում է շարունակել խտրական վերաբերմունքը, հատկապես հաշվի առնելով հասարակության մեծամասնության հոմոֆոբ տրամադրվածությունը:

Թեև խոսքի հեղինակները հիմնականում հասարակ քաղաքացիներ են և պաշտոններ չեն զբաղեցնում, իրենց մեծ քանակով նրանք ներկայացնում են հասարակության լայն շերտերի մոտեցումը՝ փաստացի արդարացնելով ցանկացած վատ վերաբերմունք և բռնություն ԼԳԲՏ+ անձանց հանդեպ, անգամ կյանքի իրավունքի խախտման հասցնող:

Մեկնաբանություններում մարդիկ բացահայտ ուրախացել են երեխայի մահվան կապակցությամբ և անգամ կոչ են արել մյուս ԼԳԲՏ+ անձանց ինքնասպանություն գործել: Սա կարող է ավելի խոցելի ու մարգինալացված անձանց հասցնել հոգեբանական ծանր վիճակի և մեկուսացման:

Այս խոսքը տարածվել է գրեթե բոլոր լրատվական նյութերի մեկնաբանություններում, և յուրաքանչյուր մեկնաբանություն պետք է դիտարկել իր լսարանի ու տարածման շրջանակում:

Ատելության խոսքի նման ծավալը և բովանդակությունը իրական վտանգ է ստեղծում այն ԼԳԲՏ+ անձանց համար, ովքեր իրենց կյանքում արդեն բախվում են նման խոչընդոտների:

Այս դեպքն էլ մնացել է առանց պետության արձագանքի՝ ոչ իրավական քայլերի, ոչ հրապարակային քննադատության տեսքով:

Միևնույն ժամանակ, պետությունը բավարար քայլեր չի ձեռնարկում հանրությանը իրազեկելու և հանդուրժողականություն սերմանելու ուղղությամբ: Հեղափոխությունից հետո գրեթե ոչինչ չի արվել ԼԳԲՏ+ հարցերով հանրային կրթվածությունը բարձրացնելու համար:

Այս ամենը խորացնում է հասարակության մեջ անջրպետը և խթանում ատելությունը ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ:

Միաժամանակ հասարակության նման վերաբերմունքն ու պետության արձագանքի բացակայությունը հստակ ազդակ է տալիս ԼԳԲՏ+ անձանց ընտանիքներին, որ եթե նրանք չմերժեն իրենց նույնասեռական, բիսեքսուալ կամ տրանսգենդեր երեխաներին, իրենք էլ կհայտնվեն ատելության և անհանդուրժողականության թիրախում: Սա կարող է առաջացնել թե հոգեբանական ճնշում, թե դրդել ընտանեկան բռնության:

Իշխանությունները որևէ կերպ չեն արձագանքել նման մանիպուլատիվ մեկնաբանություններին: Սա հնարավորություն է տալիս անարգել տարածել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ: Իհարկե, այստեղ անհրաժեշտ է տարբերակել՝ խոսքն արդյոք պարունակում է բռնության կոչեր, արդարացում կամ քարոզ, քանի որ միայն այդ դեպքում կարելի է խոսքի հեղինակներին ենթարկել քրեական պատասխանատվության: Մյուս դեպքում, երբ խոսքը վիրավորանքների կամ ապատեղեկատվության մասին է, իշխանությունների հիմնական քայլը պետք է լինի նման խոսքը քննադատելը և դատապարտելը՝ որպես քաղաքական պայքարի անընդունելի միջոց: Իսկ ապատեղեկատվությանը հակազդելու լավագույն ձևը հասարակության իրազեկումն է, որպեսզի մարդիկ կարողանան տարբերել և մերժել իրականությանը չհամապատասխանող և հակագիտական տեղեկատվությունը:

Այս իրավիճակը ցույց է տալիս, որ պետությունը անկարող է կամ չի ցանկանում լուծել նման խնդիրները, չնայած բավարար իրավական գործիքների առկայությանը: Նմանատիպ դեպքերի պարբերականությունը և պետության կողմից միջոցների բացակայությունը արդեն կարող է դիտարկվել որպես մարդու իրավունքների խախտում՝ քանի որ պետությունը, գիտակցելով խնդիրները և դրանց հետևանքները, չի ձեռնարկում դրանք կանխելու անհրաժեշտ քայլեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քրեական օրենսգրքի՝ բռնությունների հրապարակային կոչերը, բռնությունն արդարացնելը և քարոզելը քրեականացնող հոդվածը, որը գործում է շուրջ հինգ տարի, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության արդյունավետ գործիք չի կարող համարվել: Այս տարիների ընթացքում այն կիրառվել է բացառապես քաղաքական իշխանությունների, մի դեպքում, նաև՝ ընդդիմադիր ազդեցիկ գործիչների պաշտպանության նպատակով: Այս դեպքերում ևս, փաստացի, պատասխանատվության են ենթարկվել հասարակ քաղաքացիներ, իսկ այնպիսի մարդիկ, ովքեր ունեն հասարակության շրջանում ճանաչում և որոշակի լսարան, որևէ պատասխանատվության չեն ենթարկվել. նրանց խոսքը գնահատվել է որպես քաղաքական վերլուծություն և քննադատություն:

Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով բռնության կոչերի, դրանց արդարացման կամ քարոզչության որևէ դեպք իրավապահների ուշադրություն չի գրավել և եթե անգամ որևէ պարագայում նախապատրաստվել է վարույթ և ուսումնասիրվել են նյութեր, ապա դա այդպես էլ կիսատ է թողնվել և մեղադրական եզրակացությամբ դատարան չի ուղարկվել:

Կարևոր է նկատի ունենալ, որ իրավապահ մարմինների գործելակերպը մեծ ազդեցություն է կրում հենց իշխանությունների քաղաքականությունից, որը, այս պարագայում, ակնհայտորեն ցույց է տալիս, որ որևէ կերպ հետաքրքրված չէ ԼԳԲՏ+ անձանց շահերի պաշտպանությամբ:

Չնայած նրան, որ մինչև 2018 թ.-ի հեղափոխությունը և դրանից հետ առկա իրավիճակը էականորեն տարբերվում են, ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքների պաշտպանության իրավիճակը չի փոխվել: Մասնավորապես, 2018 թ.-ից առաջ առկա իրավիճակի ուսումնասիրությունը վկայում էր, որ ատելության խոսքի հիմնական հեղինակները պետական պաշտոններ զբաղեցնող անձինք էին: Իսկ նոր կառավարությունը հիմնականում ձեռնպահ է մնում բռնություն, թշնամանք քարոզող ուղղակի կոչերից: Միևնույն ժամանակ, նման կոչերին չարձագանքելը և զուգահեռաբար քաղաքական շահարկումներում ԼԳԲՏ+ անձանց հարցերի կիրառումը փաստացի ունենում է նույն արդյունքը.

- իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների բացակայություն,
- երկրում ԼԳԲՏ+ անձանց կյանքի անապահով պայմաններ:

Այսպիսով, որ նախ և առաջ հենց իշխանության մարմինների կողմից պետք է համապատասխան գնահատականներ տրվել ատելության խոսքի տարաստիճան դրսևորումներին, ինչը կներառի նաև հստակ ուղերձ իրավապահ մարմիններին՝ իրականացնելու դեպքերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- Համապարփակ կարգավորման ենթարկել ատելության խոսքի տարբեր աստիճանները՝ որոշակիացնելով քրեական պատասխանատվություն ենթադրող խոսքի շրջանակը:
- Պատշաճ քննություն իրականացնել ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնության պայմանավորված բռնության կոչերի, բռնության արդարացման կամ բռնության քարոզի դեպքերի կապակցությամբ:
- Իրականացնել ՀՀ Քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածի շրջանակներում հարուցված վարույթների և դրանց ընթացքի փաստագրում, տվյալների հավաքագրում և վարել վիճակագրություն:
- Դատավորների վերապատրաստման ծրագրերում ներառել ատելության խոսքին վերաբերող գործերի քննության առանձնահատկություններին վերաբերող մոդուլ՝ արտահայտման ազատության սահմանափակման պայմանների մանրակրկիտ ուսումնասիրության նպատակով:
- Հրապարակայնորեն դատապարտել ատելության խոսքը՝ ներառյալ՝ ԼԳԲՏ+ անձանց հասցեին հնչող թշնամանք ու անհանդուրժողականություն սերմանող խոսքը:
- Իրականացնել հասարակության շրջանում հանրային իրազեկման, հանդուրժողականության բարձրացման արշավներ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ

- Գործ 1 - ԱՎԴ4/0002/01/23
- Գործ 2 - ԵԴ/1337/01/22
- Գործ 3 - ԼԴ/0099/01/23
- Գործ 4 - ԼԴ/0021/01/23
- Գործ 5 - ՍԴ/0079/01/22
- Գործ 6 - ԿԴ/0196/01/22
- Գործ 7 - ՇԴ3/0009/01/22
- Գործ 8 - ԵԴ/0983/01/22
- Գործ 9 - ԵԴ/0961/01/22
- Գործ 10 - ԵԴ/0640/01/22
- Գործ 11 - ԳԴ1/0048/01/21
- Գործ 12 - ԵԴ/1485/01/21
- Գործ 13 - ԵԴ/1285/01/21
- Գործ 14 - ԵԴ/1131/01/21
- Գործ 15 - ԵԴ/1103/01/21
- Գործ 16 - ԵԴ/1063/01/21
- Գործ 17 - ՍԴ/0044/01/21
- Գործ 18 - ԱՐԱԴ/0060/01/21
- Գործ 19 - ԵԴ/0612/01/21
- Գործ 20 - ԵԴ/0383/01/21
- Գործ 21 - ԵԴ/0348/01/21
- Գործ 22 - ԵԴ/0323/01/21
- Գործ 23 - ԵԴ1/1695/01/23

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՇՏՊԱՆԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԸ 2003 Թ.-Ի ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 226.2 ԵՎ 2021 Թ.-Ի ՕՐԵՆՍԳՐՔԻ 330 ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Մամիկոնյանց 46/5

«29» ---05--- 2025 թ. N 06/06/184842-25

Ձեր ----------

Կարինե Աղաջանյանին
«Փինք» իրավապաշտպան ՀԿ
Հասցե՝ ք.Երևան, Սայաթ-Նովա 33փ., 68բ.

Հարգելի՛ տիկին Աղաջանյան,

Ի պատասխան Ձեր կողմից 2025 թվականի մայիսի 21-ին ՀՀ քննչական կոմիտեի նախագահին հասցեագրված տեղեկատվություն ստանալու մասին հարցմանը՝ հայտնում եմ, որ ՀՀ քննչական կոմիտեում նշված բովանդակությամբ տեղեկատվության համապատասխան միասնական հաշվառում չի վարվում:

Հարգանքով՝

Պետ, արդարադատության
առաջին դասի խորհրդական Կ.Շառոյան

PINK
ARMENIA

pinkarmenia.org